



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հարց

Կարճ ճարտարագ.

տարրեր կապ

Կ. տարր

2398

9(47-925)

9-47

Կ. Գրախոս

1923

2012

ԳԷՈՐԳ ՄԵՍՐՈՊ

33

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՒՆԱԻՈՐ ԳԱՐՏԵՄԵՆՐՈՎ



ՏԱՐՐԱԿԱՆ Ա. ՏԱՐԻ



Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(10,000ԲԻ ՕՐԻՆԱԿ)



“ՓԱՐՈՍ,, ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ


1923

9(47. 925)
Գ-47

(40325)

-97

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Անշուշտ դասագրքի մը յառաջագանը ընդհանրապէս յայտարարութիւն մը կ'ըլլայ անոր մէջ մշակուած ծրագրին և դասագրքի գործածութեան տեսակէտով հեղինակի ցուցումներու ստին: Այս հայեցակէտով երկու խօսք կ'ուզենք ընել և՛ մենք:

Հայոց Պատմութեան դասագրքերը շատ կան և տակաւին երբեքն կրնան ելնել հարկաւ: Բայց ինչպէս ամէն դասագրք, Հայոց պատմութեան նոր դասընթացք մըն ալ, որ իր նախընթաց նմաներն ունի, գոյութեան իրաւունք ունենալու համար, անհրաժեշտ որ իր նախորդներուն վրայ ունենայ առաւելութիւններ, նորութիւններ ու նոյնիսկ գերազանցութիւններ: Մենք չենք գիտեր չ'մեր այս ձեռնարկին մէջ որքան առաւելութիւններ կամ նութիւններ պիտի գտնեն ուրիշները, սակայն լաւ համոզուած ենք որ անպայման պիտի ունենայ ան այդ առաւելութիւններէն, ան աւանդ նորութենէն բաւական բան: Առանց այդ համոզումին գիտակցութեան չպիտի ուզէինք գոնէ ձեռք առնել, լոկ շատ ակնկալութեամբ:

Հասարակութեան Եանօթ իրողութիւն մըն է այլեւս որ մեր պատմութիւնը այս վերջին տարիներս բոլորովին Կերպարանափոխ լած է: Բնական Պատմութիւն և Աւանդական Պատմութիւն երկու ոչորջումները սովորական բացատրութիւններ են այսօր: Մեր ջ ալ, ինչպէս ուրիշ ազգերու մէջ, այսօր երկու հոսանք կը տնտուի, մէկը կը բաղձայ մոռնալ ինչ որ հին է ու աւանդական, աշել անցեալի անհետացող մթութիւններու մէջ և ընդունիլ ինչ պատմական գիտութիւնը իբրեւ ճշմարիտ ու վաւերական կը ուսանի: Այսպիսիները, թէեւ քիչ են թուով, կը փափաքին որ զպրօցներէն վերնայ հին աւանդական պատմութիւնը ու տեղի տայ քննական և ճշմարիտ պատմութեան, կ'ուզեն աշակերտներուն սորվեցնել միայն ինչ որ ճիշդ է և ընդհանրապէս ընդունուած:

Եւ սակայն պակաս չեն այնպիսիները, երկրորդ հոսանքին հեռուողները, որոնք կ'առարկեն թէ՛ քննական պատմութիւնը տակաւին շինուելու վրայ է, ախողջապէս կատարելագործուած չէր եւ կարծիքներու տարբերութիւններ կան, հետեւաբար չարժեք:

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՍՈՒՆ


Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 327

72390-4

2004

440-848



մեր աշակերտներուն միտքերը պաշարել փոփոխուելու վրայ եղող կարծիքներով կամ ենթադրական ճամարտութիւններով Անկէ զատ կ'առարկեն թէ Աւանդական Պատմութիւնը մեր ղեզղին փառքը կը պատմէ, մեր հերոսներուն քաջագործութիւնները կը փառաբանէ. Անոր ներկայացուցած տկարները, Հայկի, Արամի, Արայի, Վահագնի, Վաղարշակի ևն. դէմքերն ու գործերը սահմանուած են մեր մանուկներու ներքին մարդը շինելու, ազգային կամ սոհ-մային զգացումը արթնցնելու. Ուրեմն, կը պահանջեն որ մէկդի նետուի Բննական Պատմութիւնը, մանաւանդ մեր դպրոցներէն.

Երկու հոսանքներն ալ ծայրայեղ են. Անիրաւ են առաջին-ները, ինչպէս կը սխալին երկրորդները.

Ինչպէս ամէն ազգի նոյնպէս և մեր պատմութիւնը իր նախնական շրջանին մէջ մուտք է ու առասպելական, Բայց պէտք չէ արհամարհել մեր ժողովուրդին աւանդութիւններն ու առասպելները, ինչպէս ուրիշ ղեզղերչն արհամարհեր իրենցիները. Կենսական Պատմութեան ծննդեան ատենները անկարելոր նկատուեցան Աւանդական Պատմութեան տուիքները, սակայն այսօր տարբեր կը խորհին նոյնիսկ թուեղ. հակառակորդները Աւանդական Պատմութեան, Առաջ Խորենացին կը նկատուէր ստախօս ու խորդախ գրէչ մը, որ ինքը կը դարբնէ կամ կը շինէ Աւանդակուն Պատմութեան դէմքերն ու դէպքերը, բայց այսօր ընդհանրապէս ընդունուած է թէ Խորենացի հաւաքիչ մըն է հայկական աւանդա-վէպերու, առասպելներու, զրոյցներու և ժողովրդական բանաստեղծութիւններու. Այս տեսակէտով պէտք է երախտապարտ ըլլալ անոր.

Ուրեմն մենք ունինք տոասպելներ ու զրոյցներ, որոնք մինչև ցարդ իրբեւ իրական պատմութիւններ էինք նկատուծ. այսօր այլևս չենք կրնար նկատել իրբեւ այդ.

Հարկ է սակայն բոլորովին վտարել մեր դպրոցներէն այդ առասպելներն ու զրոյցները. Հո՞ս է որ կը սկսի միջին ու տրամաբանական ճամբան.

Մեր ազգային աւանդավէպերն ու առասպելները պէտք է աւանդուին մեր դպրոցներուն նախնական կարգերուն մէջ քանի մը տեսակէտներով.

Ա) Մանկավարժական տեսակէտ. — Առասպելներն ու հէքեաթները մանուկի մտքին աւելի յարմար են ու դիւրամարս. Ո՞վ չգիտեր որ մանուկը ինչ հետաքրքրութեամբ կը լսէ իր տատին, պա-

պին կամ ութիշ ու է մէջին հրաշագատուած զրոյցները. Մանուկը անքաղաքակիրթ նախամարդոց մտավիճակը կը ցուցնէ. անոնք ալ մանուկներ էին ու հաճոյքով կը շինէին և կը լսէին առասպելներ. Մեր պապերը ապրած են այդ մանկական շրջանը և ստեղծած են իրենց զրոյցները, որոնք հայ մանուկին ամէնէն յարմար մտքի սնունդը կրնան կազմել. Արդէն մեր Տարրական ու Նոյնիսկ Միջին կարգերուն աշակերտները չեն կրնար մարտել ո՛ր և է կանոնաւոր ու շղթայուած պատմութիւն. ինչպէս եւրոպական դպրոցներուն, նոյնպէս Կովկասի Հայոց վարժարաններուն մէջ Տարրական կարգերուն պատմութիւն չաւանդուիք. Կովկասի ծխական դպրոցներու Գ. կարգերէն է որ կ'սկսին աւանդել. Անոց Գ. կարգը համապատասխան է գրեթէ մեր Միջին Ա. կամ Տարր. Բ. դասարաններուն. Բայց ամէն տեղ, մանկավարժական ամէն դրու-թեամբ կառավարուող դպրոցներու մէջ, շատ կանուխէն գոյու-թիւն ունին, կ'աւանդուին առասպելն ու պատմութիւնները, որոնք մանուկին միտքը կը բանան. Բնականաբար այդ տոասպելներն ու պատմութիւնները մանուկի միջավայրէն պէտք է քաղուած ըլլան. Գերմանացի մանուկ մը գերմանական հէքեաթներէ աւելի կրնայ հաճոյք զգալ ու ըմբռնել զանոնք, ինչպէս Անգլիացի մը՝ անգլիականներէն. Յօն մը՝ յունականներէն, Հայ մը՝ հայկականէն.

Բ) Ազգային դաստիարակութեան տեսակէտ. — Պէտք է ընդունիլ թէ հայկական աւանդավէպերն ու առասպելները ամէնէն աւելի կը ցոյցանեն հայկական բարքն ու սովորոյթները. հայկական ձգտումներն ու իտեալները. Հայ մանուկը եթէ կ'ուզենք դաստիարակել տոհմային նկարագիրով ու ձգտումներով — ինչ որ պարտաւոր ենք ընել, այս կը տրամաբար տրամաբանութիւնն ու դաստիարակութիւնը. Եթէ կ'ուզենք որ հարեւի օգին վառի անոր մէջ, պարտաւոր ենք մեծ տեղ տալ հայ աւանդութիւններուն, հայ առասպելներուն ու հէքեաթներուն. Անոնք գերազանցապէս հայկական են ու հայելին հայեցի նկարագրին.

Գ) Պատմութիւնը հասկնալի դարձնելու տեսակէտ. — Առասպելներու ռուսումը անհրաժեշտ է նոյնիսկ պատմութեան համար. Աւանց անոնց շատ անգամ չէ կարելի ըմբռնել պատմութիւնը. Արդէն պատմութեան առաջին էջերը առասպելներէ հիւստուած են. Բոլոր ժողովուրդներու համար նոյնն է. Մեր պատմութիւնը բացառու-թիւն չի կրնար կազմել. Ինչ ալ ընենք, մեր պատմութիւնը պիտի ունենայ շրջան մը, որուն դէպքերը մթութեան քողովը ծածկուած

են, որուն վրայ մեր գուսանական երգերը սահմանուած են լոյս սփռելու:

Է) Ընդհանուր արժիքի չեսակոց. — Մենք, Հայերս, դժբախտ ենք որ կորսնցուցած ենք մեր նախահայրերու յիշատակներուն գրեթէ մենագոյն մասը: Ինչ որ ունինք փոքրիկ պատուիրկներ են միայն: Ատոնք Հայուն գանձերն են, հուսթեան կտակը, ալնքան թանկագին իրենց բազմակողմանի յատկութիւններով, որ ինքնին պիտի մղուէինք գուրգուրանքով պահպանել զանոնք ու սերունդէ սերունդ փոխանցել այդ գեղեցիկ արտադրութիւնները հայ միտքին ու երեւակայութեան:

Այս ու բերջ բազմաթիւ տեսակէտներով հայկական սուանդավէպերն ու առասպելները մաս պէտք է կազմեն հայ դաստիարակութեան և նախադուռը Հայոց Պատմութեան:

Քիչ մըն ալ մեր ծրագրի մասին:

Մեկնելով վերը ներկայացուած սկզբունքն ու պատճառներէն, Տարրական Ա. և Բ. տարիներու միջոցին ֆանացած ենք աւանդել միայն հայկական աւանդավէպերն ու հէպեաթները, անշուշտ ֆանալով նոյն դասարաններու համապատասխան տարիքն ունեցող մանուկներու հասկացողութեան յարմարելով: Այս մտքով հայ աւանդավէպերէն դատած ենք պարզերն ու նուազ դժուարելիները. լեզուն աշխուտած ենք կորելի եղածին չափ բանկական դարձնել ու դիւրահասկնալի: Գէտք չէ մոռնալ որ կարգ մը առասպելներ կամ սուանդավէպեր, օրինակ՝ Զրհնդիղը, Աջատալաշինոյրիւնը ևն., կը գտնուին նաև ուրիշ ազգերու մօտ: Մենք աշխատած ենք այդ պիտիներուն հայկական ձեւը պահել: Այնպէս որ Ս. Գիրքի պատմութենէն կրնայ ըլլալ որ չնչին տարբերութիւններ ունենան անոնք: Այս կէտք պատմութեան ուսուցիչը կամ Հին Ուխտի ուսուցիչը կրնան երկու բառով ի վեր հանել ու մանուկներուն միտքը ընտելացնել սուանդութիւններու ցեղան տարբերութեան:

Միջին Ա. և Բ. տարիներուն մէջ պիտի ֆանանք հայկական աւանդական պատմութիւնը աւանդել զիջ մը ընդարձակ և պատրաստել աշակերտները բուն քննական պատմութեան:

Իսկ Բարձրագոյն Դասընթացը պիտի յատկացնենք բոլորովին քննական հայ պատմութեան գրեթէ իր բոլոր մանրամասնութիւններովը, անշուշտ միշտ յարմարելով դասագրքի հանդամանքին:

Տարրական ու Միջին կարգերը մենք վերածեցինք երկերկու հատորներու, քանի մը պատճառներով:

1) Ազգ. Ուսումն. Խորհուրդի Կազմ. Կանոնագրի համեմատ դպրոցներու մէջ Հայոց Պատմութիւն պիտի աւանդուի շաբաթական 1—2 պահ: Դպրոցական տարին առնուազն 35—40 շաբաթ նկատելով, եթէ շաբաթական երկու պահ դաստիասել հարկ ըլլայ, տարեկան առնուազն 70—80 դաս կ'ընէ: Ուրեմն Տարրական կարգերու երկու տարիները միանգամայն կ'ունենան առնուազն 140—160 դաս: Արդ, մէկ հատորի մէջ այսքան դաս չէ կարելի ամփոփել և այդ հատորի անունը դնել Տարրական դաստիարակի դասագիրք: Հետեւաբար ուսուցիչը կամ պիտի ֆանցնէ իր աշակերտները և կամ չափազանց պիտի յոգնեցնէ իր սաներուն ուղեղը: Այս պատճառով 35—40 դաս պարունակող ներկայ դասագիրքը հանգիստ կերպով կրնայ մարուել մէկ տարուան մէջ, Տարրական Ա. տարիի աշակերտներէն. Տարր. Բ. տարիի համար նման, զիչիկ մ'աւելի լայնկեկ ծանօթութիւններով պատրաստուած դասագիրք մը նոյն դիւրութիւնը պիտի ընծայէ:

2) Մանկավարժական տեսակէտով նոյն իսկ այսբարձր է 2 տարի միւնոյն դասագիրքը տալ մանուկին ձեռքը: Մանուկը կը գրտնուի այնպիսի շրջանի մը մէջ ուր մարդ ամէն վայրկեան նորութեան տենչը կ'ըզգայ: Մանուկներ եղած են որ իրենց Այբբենարանը պատուած են միմիայն նորը ունենալու համար: Հոգեկան պահանջ է մանուկին համար նոր կողքով, նոր պատկերներով ու նոր բառերով դասագիրք մ'ունենալ, հոգ չէ թէ նախկին կամ արդէն իրեն ծանօթ գաղափարները գտնուին հոն: Հինը ձանձրութիւն կը պատճառէ իրեն, իսկ նորը հետաքրքրութիւն: Այս երեւոյթը չափահասներու քով իսկ տիրող է, մ'ը մնաց մանուկներու մօտ: Հետեւաբար մենք ֆանացինք երկորդ և չորրորդ հատորներուն մէջ առաջինէն ու երրորդէն աւելի նորութիւններ, նոր պատկերներ, նոր ծանօթութիւններ դնել կամ աւելցնել: Մենք կ'աշխատինք նաև հատորներու գիրքն ալ դիւրամատչելի դարձնել, ծնողներու անտեսական պահանջն ալ նկատի առած ըլլալու համար:

Իսկ բարձրագոյն դասարաններու հատորը աւելորդ կը նկատենք երկուքի բաժնել, նկատելով որ նոյնը ստիպող պատճառներ գրեթէ չկան հոն:

Երկու իսօք ալ մեր դասագրքի գործածութեան մասին:

ինչպէս արդէն դասերը պատմելու մեր եզանակէն կ'երեւի, մեր դասագիրքը սահմանուած չէ աշակերտներուն գոյ ընել տալու: Մենք պիտի խնդրէինք մեր պաշտօնակիցներէն որ երբեք չպահանջէին իրենց աշակերտներէն թուժակօրէն գոյ ընել: Իւրաքանչիւր դասի տակ հարցարան մը դրած ենք. ուսուցիչները կըրնան այդ և կամ նման հարցումներով դասը թելադրել, անգամ մը դասին բովանդակութիւնը կամ բերանացի պատմել և կամ աշակերտներուն հետ մէկտեղ կարդալ և բացատրել յետոյ:

Ձեռք ուզեր ուրիշ բան մ'աւելցնել, մնացեալը թողալ ուսուցիչներու նախաձեռնութեան (initiative) ու դիտողութեան:

Գարտը կը սեպենք յիշել հոս որ մեր այս առաջին հատորին մէկ քանի դասերուն համար օգտուած ենք Պ. Ս. Լիսեցեանի «Հայ-տենի Առասպելներից» գրքէն:

1913 Յունուար 31

Գ. Է. Ռ. Մ. Ս. Ռ. Պ.

Կ. Պոլիս

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Մեր դասագրքերուն տպագրութիւնէն գրեթէ անմիջապէս յետոյ Հայ Ժողովուրդին կրած աղէտներուն հակառակ, Հայոց Պատմութեան դասընթացքի այս շարքը գտաւ մեծ ընդունելութիւն: Այս գնահատութիւնը քաջալերութիւն մըն է մեզի:

Բ. տպագրութեան առիթով, կը կատարենք հիմնական բարեփոխումներ: Այս գրքիկին վերջը կը դնենք Հայաստանի Աշխարհագրութիւն մը, յատկապէս պատրաստուած տարրական կարգերու համար, և գլխաւորապէս գրքիկի բովանդակութիւնէն քաղուած աշխարհագրական անուններով: Անշուշտ յարգելի ուսուցիչները բարի պիտի ըլլան՝ պատմութեան դասերուն ընթացքին՝ օգտագործել աշխարհագրութեան այս մասը, մանաւանդ շնորհներուն և քարտէսներուն վրայ ուշադրութիւն դարձնել տալով աշակերտներուն:

Յետ, 15 Օգոստ. 1922

Գ. Մ.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ՏԱՐՐԱԿԱՆ Ա.)

Ա. ԴԱՍ

ՆԱԻԱՍԱՐԴԻ ՏՕՆԸ ԵՒ ԳՈՒՍԱՆԸ

Սիրելի մանուկներ,

Մեր հայրերը նոր տարին կը տօնէին փառաւոր կերպով: Այդպիսի տօներէն մէկը պիտի նկարագրեմ ձեզի:

Բազաւան գիւղը հաւաքուած են անթիւ ուխտաւորներ: Հայաստանի ամէն կողմերէն բազմութեամբ եկած են ամէն կարգի մարդեր. գիւղացիներ, քաղաքացիներ, զինուորներ, իշխաններ, քուրմեր (հեթանոս քահանաներ), նոյնիսկ Հայոց թագաւորը, ամէնքն ալ հոն եկած են: Ընդարձակ դաշտին վրայ, գետին եզերքը, կանգնած են անհամար վրաններ: Այդ վրաններուն մէջէն ամէնէն մեծը և գոյնզգոյնը թագաւորինն է: Բոլոր ժողովուրդը եկած է նոր տարին աստուածը

փառաբանելու : Դուք չէք գիտեր այդ աստուածին անունը, որովհետև հիմայ մենք չենք պաշ-




Արամազդ կամ Վանասուր աստուած

տեր զայն . մեր պապերը կը պաշտէին նոր տարիի աստուածը, որուն անունն էր ՎԱՆԱՍՈՒՐ : Բոլոր ուխտաւորները ծաղիկներ կը նուիրէին այդ աստուածին . անիկա առատ հունձք և պտուղներ կը պարգեւէ մարդերուն : Օդը պայծառ էր, որովհետև ամառ էր : Մեր պապերը շատ խելացի կերպով նոր տարին կը տօնէին Վարդավառին :

Ահա իրարու վրայ շուր կը թափեն, աղանի կը թռցնեն դէպի երկինք : Թմբուկները կը զարնուին, փողերը կը հնչեն : Երգ, պար, ամէն կողմ ուրախութիւն կը տիրէ : Տղաները կը խաղան ու կը վազվզեն : Յանկարծ անուշ երգի մը ձայնը կը լսուի . ուխտաւորներէն շատերը կը ժողվուին . տղաներն ալ կը դիմեն հոն . երգիչն է ան :

Այդ երգիչին մեր հայրերը կ'ըսէին Գուսան, որ երգող, աշուղ կը նշանակէ :



Թ ա ո

Գուսանը քաղցրաձայն նուագարան մը ունի, որուն անունը թառ է, ու թէ կը նուագէ և թէ կ'երգէ : Սիրուն պատմութիւններ կ'ընէ, աղուոր առասպելներ (հէքեաթներ) կը պատմէ : Կը պատմէ մեր հին թագաւորներուն, նահապետներուն վրայ : Ձինը կը լսեն մեծերն ու պղտիկները, և բերնէ բերան իրարու կը պատմեն :

Ես ալ ձեզի պիտի պատմեմ անոր պատմած առասպելներէն մէկ քանիները, պիտի տեսնէք թէ ո՞րքան աղուոր բաներ են :

Հարցաւան.— Մեր պապերը ո՞ւր կը տօնէին նոր տարին . — Նոր տարին աստուածը ի՞նչ կը կուտէր . — Ինչու կը պաշտէին Վանասուր աստուածը . — Հայր բու նոր տարին ամառը կ'ըլլար թէ

ձմեռը — Այդ ասին ի՞նչ կ'ընէին. — Ո՛վ էր Գուսանը. — Ինչե՞ր կը պատմէր կամ կ'երգէր.

Բարոյական բերադրութիւն. — Ուսուցիչը կրնայ այս դասի միջոցին աշակերտներուն ուշադրութիւնը հրաւիրել այն բանին վրայ որ հայկական ամանորի սովորութիւնը աւելի տեղին, յարմար ժամանակի կը կատարուէր քան արդի կազմանդը. կրնայ շեշտել նաեւ Գուսանի կուտարած բարեբար դերը հայ ժողովուրդին մէջ, եր երգերով ու նուագով.

Բ. Մ Ա Ս


Ձ Ր Ղ Ե Ղ Ե Ղ Լ

Գուսանը երգելով այսպէս կը պատմէր.

Աստուածները (*) ստեղծեցին աշխարհն ու մարդը. Առաջին մարդիկը հսկաներ, խոշոր և վիթխարի էին. Անոնք անգութ էին և վայրենի. մոռցան իրենց աստուածները և սկսան չարութիւններ ընել. Մեծ աստուածները միասին հաւաքուելով խորհուրդ ըրին և ուղեցին ոչնչացնել մարդերը երկրիս երեսէն. Բայց իմաստութեան աստուածը Տիր, միտքը գրաւ աստուածներուն խորհուրդը յայտնել մարդոց. Նա եկաւ յայտնեց թէ՛ աղքատներուն և թէ՛ հարուստներուն. Բսի-

(*) Ուսուցիչը պէտք է զգացնէ աշակերտներուն թէ հին Հայերը շատ աստուածներ կը պաշտէին սկիզբէն, երբ ասիական քրիստոնեայ չէին.

սութը (Նոյ) անուն բարի մարդ մը կար. Տիր ըսաւ անոր. «Նաւ շինէ. Թո՛ղ քու ունեցածն ու չունեցածը, և կեանքդ փրկէ. Ամէն տեսակի կենդանիներ նաւ մտցուր. »



Ձրեղեղը եւ Քսիսուրի կամ Նոյի նաւը

Քսիսութը շինեց իր նաւը, կուպրով (զիֆթ) ծեփեց. Ամբողջ իր ընտանիքը, բոլոր տնեցիներն ու ընտանի և վայրենի կենդանիները ներս տարաւ. Երբ նշանակուած ժամը լրացաւ, Քսիսութը երկինք նայեցաւ և սարսափեցաւ. Մտաւ նաւը և դուռը գոցեց. Եւ ահա սև սև ամպեր ժողվուեցան երկինքին վրայ, որոտումները սկսան և սոսկալի հեղեղներ սկսան թափիլ երկրիս վրայ.

Մարդիկ յիմարի պէս ասդին անդին կը վազէին , բայց ջուրը կը հասներ իրենց : Վեց օր վեց գիշեր ջրհեղեղ եղաւ . իսկ եօթներորդ օրը փոթորիկը դադարեցաւ և ջուրերը հանդարտեցան : Քսիսութը պատուհանը բացաւ . ան իր ջուրը նայեցաւ . միայն անծայր ծով էր ու մարդերու դիակները կը լողային ջուրին երեսը : Նաւը Հայաստանի հորդուաց լեռներէն մէկին՝ Սարարադ լեռան վրայ կեցաւ : Եօթներորդ օրը առտուն Քսիսութը պատուհանը բացաւ և աղանի մը թող տուաւ : Աղանին թռաւ , հեռունը պտտեցաւ , բայց հանգչելու տեղ մը չգտնելով վերադարձաւ : Այն ատեն առաւ ագռաւ մը և արձակեց : Ագռաւը թռաւ հեռուն , և տեսնելով որ ջուրը պակսեր է , սկսաւ ուտել դիակներու միսը . գնաց ու ալ չդարձաւ :

Անկէ ետքը Քսիսութը արձակեց բոլոր կենդանիները . ինքն ալ դուրս ելաւ նաւէն աստուածներուն զոհ մատուցանելու համար : Քսիսութը հաճելի եղաւ աստուածներուն , անոնք Քսիսութը և իր կինը աշխարհքէն վերցուցին ու աստուածներու բնակավայրը տարին :

Նաւին մէջի մարդերը կ'սպասէին Քսիսութին և անոր կնոջ , բայց եկող չկար : Վերջապէս երկինքէն ձայն մը առին , որ կ'ըսէր . « Պարապ տեղը մի՛ սպասէք : Աստուածները զանոնք աշխարհքէն վերցուցին իրենց բարեպաշտութեանը համար : »

Երբ մարդիկ հարցուցին թէ ո՞ր կը գըտնուին , վերէն ձայն մը ըսաւ .

— Ի ուր Հայաստանի մէջ կը գտնուիք . այս տեղէն դէպի հարաւ գացէք :

Անոնք հնազանդեցան , զոհեր մորթեցին և գաղթեցին դէպի հարաւ , Բաբելոն : Այսպէս վերջացաւ ջրհեղեղը և մարդիկ նորէն սկսան բազմանալ :

Հարցաւան .— Աւաջին մարդերը ինչպէս էին .— Աստուածները ինչ խորհուրդ ըրին .— Մարդերուն ո՞վ յայտնեց անոնց խորհուրդը , և որո՞ւ .— Քսիսութը արձակեց անգամ ինչ կենդանի արձակեց նաւէն .— Երկրորդ անգամ ինչ , երրորդին ինչ .— Նաւը ո՞ր լեռան վրայ կեցաւ .— Քսիսութը և իր կինը ինչ եղան .— Նաւին կեցած երկիրը ինչ կը կոչուէր :

Բարոյակաճ քելադուրիւն .— Հարկ է շեշտել թէ չարութիւնը պէտք է պատժուի , ինչպէս խիղճը կը պահանջէ : Քսիսութի բարութիւնը և վարձատրուիլը խորհրդածութեան նիւթ կրնայ ծառայել :


Գ. Դ Ա Ս

ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ

Սիրելի մանուկներ ,

Նախորդ դասին ես ձեզի պատմեցի թէ ինչպէս աստուածները ջրհեղեղ ընելով մարդերը ջրհեղեղին : Ըսի ձեզի թէ Քսիսութի նաւը Հայաստանի Սարարադ լեռան վրայ կեցաւ : Այդ Սա-

րարադ լեռը միշտ ցոյց կուտային մեր պապերը . կ'ըսէին թէ այնտեղ մնացած էր նաւին մէկ մասը : Բարեպաշտ մարդեր վեր՝ լեռը կ'ելլէին , փայտէն կամ կուպրէն կտոր մը կը փրցնէին : Կը հաւատային թէ այդ փայտը կամ կուպրը առողջացնող դեղ է և մարդը կը բժշկէ բազմաթիւ հիւանդութիւններէ :




Մասիս լեռը

Իսկ ո՞ւր կ'ապրի Բսիսութրը . Մինչև այսօր հայ ծերունիները երկիւղածութեամբ կը նային Մասիս լեռան ձիւնապատ գագաթին և կ'ըսեն .

— Տեսէ՛ք , այն փայլիլուն ձիւներուն մէջ կ'ապրի ծերունի Բսիսութրը (Նոյ) անմահական կեանքով : Երբ Մասիս գագաթը ամպերով կը


լեցուի , Բսիսութրն է ադ , որ իր կառքով կ'ըլբօսնու այնտեղ , անոր ձիերու սմբակներուն տա-



Ասարակաւիցիներին

կէն կը բարձրանայ սպիտակ փոշի , որ ամպը կ'ըլբօսնու : Իսկ երբ լեռան գլուխը կը պսպրայ հազար

440-84



Գրքի քանակը 7
Քննարկող Կարապետյան

ու մէկ կայծերով, Գահութրի պալատն է, որ ա-
րեւի ճառագայթներէն կը շողշողայ իր անթիւ ան-
համար թանկագին քարերով:

Գուսանը երգելով կը պատմէր դարձեալ:

Գահութրի և իր կնոջ աներեւութանայէն
ետք, Նաւին մէջի մարդերը դուրս ելան և սկը-
սան դէպի հարաւ երթալ:

Գացին հասան ընդարձակ դաշտ մը, որուն
անունն էր Սեւնաւ: Հոն ուղեցին քաղաք մը
շինել և կանգնել բարձր Աշտարակ մը որ մինչև
երկինք երկարի: Կը խորհէին թէ եթէ անգամ
մըն ալ ջրհեղեղ պատահի պիտի կրնան աշտարա-
կին վրայ բարձրանալ և ազատուիլ:

Աստուածները բարկացան և բոհին.

— «Եկէք իջնենք ու խառնակենք այդ մար-
դերու լեզուները, որպէս զի անոնց հպարտու-
թիւնը խափանուի»: այնպէս ալ եղաւ:

Աշտարակը կիսատ մնաց, ու բոլոր տարբեր
լեզուներ խօսողները սկսան իրարմէ բաժնուիլ:

Հարցարան. — Գահութրի նաւը ո՞ւր կը գտնուէր. — Մար-
դիկ ի՞նչ կ'ընէին անոր կտորները. — Հայ ծերունիները ի՞նչ կ'ը-
սէին Գահութրի համար. — Նաւի մնացեալ մարդերը ո՞ւր գա-
ցին. — Ի՞նչ խորհեցան շինել. — Աստուածները ի՞նչ ըրին. —
Մարդիկ ի՞նչ ետան:

Նկարագրութիւն. — Նկատելի պարագայ կըր-
ար խորհուրդին անկատար մնալը. Գահութրի
մարդերը ամէն ժամանակ մարդոց յարգան-
ունան:

Գ. Մ Ա Ս

Հ Ա Յ Կ Ե Ի Բ Է Լ

Տե. է՛ք թէ Գուսանը ի՞նչպէս կը շարունակէ
իր պատմութիւնը:

Աշտարակը շինող հսկաներէն մէկն էր նաև
Հայկը: Նա անուանի և քաջ էր, հաստաբազուկ,
զանգուր մազերով և զուարթ աչքերով ազեղնա-
ւոր էր:

Նա ընդդիմացաւ անոնց դէմ, որոնք կ'ու-
զէին սարուկ դարձնել ուրիշները և բռնի ոյժով
միապետ դառնալ ուրիշ ազգերու վրայ:

Նա առանց վախնալու հակառակեցաւ Բէլի
դէմ, որ արդէն շատերը իրեն հնազանդեցուցեր
էր բռնութեամբ և խորամանկութիւնով:

Բայց Բէլը կրցաւ ամէնը խոնարհեցնել իրեն
առջև, նա տիրեց ամէնրին: Բոլոր ազգերը սկը-
սան կատարել իրեն հրամանները, և իբրև աստ-
ուած կը պաշտէին զայն, անոր երկրպագութիւն
կ'ընէին և զոհեր կը մատուցանէին:

Միայն Թորգոմի որդին ազատասէր Հայկն
էր, որ չուզեց ծառայել անոր՝ աստուտեղ դնե-
լով: Նա մեկնեցաւ, գնաց դէպի հիւսիս, դէպի
Արարատ երկիրը, իր հետ առնելով անդրանիկ
որդին Արմենակը և միւս որդիները, աղջիկները,

Թոռներն ու իր զորաւոր մարդերը, Թուով երեք հարիւր հոգի: Հայկին հետ ուրիշ ազատասէր մարդեր ալ ճամբայ ելան, և ամէնքը մէկէն հա-



Հայկ Նահապետ

սան ընդարձակ դաշտ մը, կորդուաց լեռներուն մօտ:

Այդտեղ Հայկը բնակութեան տուն շինեց և իր Արմենակի որդւոյն, իր կառմոս Թոռանը յանձնեց: Իսկ ինքը տունով տեղով դնաց աւելի վեր:

Վերջապէս կանգ առաւ ընդարձակ լեռնադաշտի մը մէջ, որ կը գտնուէր Վանայ ծովին վերի կողմը: Այստեղ հաստատուեցաւ, տուն, բաւկութիւն շինեց: Այդ գաւառը կոչեց Հարի, որ հայրեր կը նշանակէ, այսինքն թէ այդտեղ բնակողները Հայերու հին հայրերը կամ նախահայրերն են: Հարիի մէջ շինեց գիւղ մը և անոր անունը դրաւ Հայկաշէն:

Բէլը երբ լսեց Հայկի մեկնիլը և ուրիշ տեղ բնակիլը, բարկացաւ: Իր որդիներէն մէկը զոկեց Հայկին և պատուիրեց որ բսէ:

— Այդ ցուրտ երկրին մէջ բնակեցար, սիրտդ ու հոգիդ ալ սառոյց դարձեր են: Կակուղցիր, մեղմացիր և հնազանդէ ինձի, ուրտեղ որ կ'ուզես հանդարտ ապրէ տաք երկրիս մէջ:

Հայկը խիստ կերպով մերժեց և ետ զրկեց պատգամաւորը:

Բէլը կատղեցաւ և խորհեցաւ որ զայն թռնէ և սպաննէ: Պատրաստեց ահագին թիւով զօրքերու բանակ և քալեց դէպի հիւսիս, Հայկի վրայ:

Գալ դասին կը տեսնենք թէ Հայկը ի՞նչպէս պատերազմեցաւ:

Հարցաւաճ. — Ո՞վ էր Հայկ. — Ի՞նչպէս մարդ էր. — Բէլ ի՞նչ ընել կ'ուզէր. — Ազգերը յազանդեցան. — Ի՞նչ կ'ընէին. — Հայկն ալ խոնարհեցա՞ւ. — Ո՞ր գնաց. — Կառմոս ո՞վ էր. — Հայկ ի՞նչ տուաւ անոր. — Ինքը ո՞ւր գնաց. — Իր բնակած տեղին առնուը ի՞նչ դրաւ. — Իր գիւղին անունը ի՞նչ էր. — Բէլ ո՞վ զրկեց Հայկին. — Հայկ ընդունե՞ց Բէլի հրաւերը. — Բէլ ի՞նչ քրաւ:

Բառոյակուն քելադ-ուրիւն. — Յոյց պէտք է տալ Հայկե ազատասիրութիւնը, բռնապետներու դէմ ունեցած պահանջը: Բարի եւ ազնիւ սիրտ ունեցողներ չեն կրնար հանդուրժել որ բռնապետ մարդեր նեղեն ու հրազանդեցնեն թշուառ մարդիկը: Բայց ողբալի են նաեւ անոնք որ կը խոնարհին և ինքզինքնին չեն պաշտպաներ:

Ե. ԴԱՍ

ՀԱՅԿԻ ԵՒ ԲԷԼԻ ՊԱՏԵՐԱՉՈՐԸ


Բէլը իր անթիւ զօրքերով հասաւ կորդուաց լեռները, որոնց մօտերը կը բնակէր Կադմոսը: Տեսնելով Բէլի զինուորներուն շատութիւնը, կադմոս փախաւ՝ առջեւէն սուրհանդակ զրկելով Հայկին:

— Գիտցիր, ով դիւցազուններու մեծ, իմացիր որ Բէլը քու վրայ կուգայ քաջերով ու երկայնահասակ հսկաներով: Նա արդէն հասած է իմ երկիրը, և ես կ'նոջս ու զսուակներուս հետ փախստական ահա կուգամ քու մօտ: Շո՛ւտ ըրէ, ինչ որ պիտի ընես ըրէ՛:

Բաջ, խելացի և գանգուր մազերով Հայկը իսկոյն ժողովեց իր բոլոր որդիներն ու թոռները, քաջ և աղեղնաւոր հսկաները, և առանց վախնալու դէմ գնաց, թէև թիւով շատ քիչոր էին իրենք:

Երկու բանակները իրարու հանդիպեցան վա-

նայ ծովին հարաւային մէկ կողմը: Չորակին աջ կողմը կեցած էին Հայկ և իրեն քաջերը, իսկ ձախ կողմը, լեռներուն վրայ տարածուած էին Բէլի զինուորները և անկարգ կերպով դէպի վար կը վազէին:



Հայկի եւ Բէլի պատերազմը

Բէլը իր յոյսը դնելով իր զօրավարներու քաջութեան վրայ, անհամբերութենէն առաջ անցած էր: Չորակին ձախ եղբրքը բլրակին վրայ եկեր էր և հպարտ կերպով կը նայէր ասդին անդին:

Բէլը հագած էր երկաթէ գլխանոց, կուրծ-

քը և կռնակը՝ պղինձէ տախտակներ, ոտքի բարձերուն և բազուկներուն վրայ՝ պահպանակներ, մէջքը կապած էր գօտի և ձախ կողմը կախած էր երկաթի սուր, աջ ձեռքը նիշակ մը ունէր, իսկ ձախ ձեռքը՝ վահան:

Հայկ՝ Բէլը տեսնելուն պէս քաշեց իր աղեղը և նետը դպցուց ճիշտ անոր կուրծքին: Նետը ծակեց կուրծքի պղինձէ տախտակը, կռնակէն դուրս ելաւ և գետինը մխուեցաւ: Պարծենկոտ Բէլը գետին տապալեցաւ և շունչը փչեց: Անոր գունդերն ալ ցիր ու ցան եղան:

Հայկ գիւղ մը շինեց այդ պատերազմին տեղը և անուանեց Հայկ, ատոր համար գաւառն ալ կոչուեցաւ Հայոց Չոր, իսկ այն բլուրը, ուր ինկաւ Բէլը, Հայկ անուանեց Գերեզմանի:

Պատերազմէն ետք Հայկ վերադարձաւ Հայկաշէն և երկար տարիներ խաղաղ կերպով կառավարեց իր երկիրն ու մեռաւ:

Հայկի անունով մեր ժողովուրդը կոչուեցաւ Հայ, իսկ մեր երկիրը՝ Հայաստան:

Հարցաւրան. — Երբ Բէլը կորուսեց լեռները հասաւ ի՞նչ ըրաւ Կողմոս. — Հայկ ի՞նչ ըրաւ. — Հայկ և Բէլ ո՞ւր հանդիպեցան. — Բէլ ի՞նչպէս չազուած էր. — Հայկի նետը Բէլին օր կողմը մտաւ եւ ի՞նչ եղաւ. — Մեռած տեղը ի՞նչ կոչուեցաւ. — Մենք որով անունով Հայ կը կոչուինք. — Մեր երկիրը ի՞նչու Հայաստան կոչուեցաւ:

Բարոյական քիւտորուրիւն. — Պէտք է վեր առնել այն պարագան որ Հայկ չյարձակեցաւ Բէլին վրայ, այլ ինքը Բէլը Հայկին վրայ: Հայկին ըրածը ինքնապաշտպանութիւն էր և ինքնապաշտպանութիւնը մարդկային պարտականութիւն մըն է. կենդանիներն անգամ ունին ինչպիսիքին պաշտպանելու ընազգն ու զէնքերը:

2. ԴԱՄ

ԱՐԱՄ ԵՒ ՆԻԻԳԱՐ

Իմ ազնիւ աշակերտները,

Գուսանը ուրիշ շատ աղուոր բաներ ալ կը պատմէ: Հայկ նահապետէն ետք անոր որդիներուն և թոռներուն վրայ երգեր կ'երգէ իր թառով: Տեսէ՞ք թէ ինչեր կ'ըսէ ան:

Հայկի սերունդէն քաջ, աշխատասէր և հայրենասէր մարդ մը կար որ կը կոչուէր Արամ: Արամի ժամանակ օտար թագաւորները եկած յարձակած էին Հայերուն վրայ և իրենց հպատակ դարձուցած էին անոնց մէկ մասը:

Արամը լաւ համարեցաւ մեռնիլ իր պապերու գրաւած և շէնցուցած երկիրներուն համար, քան թէ իր աչքով տեսնել իր ազգակիցներուն գերի ըլլալը, ուրիշներէն կոխտուիլը:

Եւ քաջութեան այնպիսի գործեր կատարեց, որ իրեն անունը փառաւորուեցաւ, իր հայրենիքը ընդարձակեց, թշնամիներուն յաղթեց, և օտարները անոր անունով Հայերը Արմէն կոչեցին և Հայաստանն ալ՝ Արմէնիա:

Հիմակ անոր քաջութիւններէն մէկ երկուքը պիտի պատմեմ ձեզի:

Հայաստանի արեւելեան կողմը Նիսիար անու-

նով մարդ մը կար : Մեղացիներու իշխանն էր ան : Նիւքար իր զինուորներով յարձակեցաւ Հայերուն վրայ և անոնցմէ մաս մը հնազանդեցուց իրեն :

Նիւքար Հայերը կը չարչարէր . ծանր տուրքեր կ'ուզէր , Հայերուն արտերն ու պտուղները կը փճացնէր :



Նիւքար իբխան ճակատէն զամուսած Արմաւիրի առճարակին վրայ

Արամ ուզեց հայերը աղատել Նիւքարի ձեռքէն : Չինուորներ պատրաստեց , քաջ և ուժեղ աղեղնաւոր (նետ նետող) երիտասարդներ ժողովեց և առանց իմացնելու՝ յանկարծ յարձակեցաւ

Մեղանացիներուն վրայ : Դեռ արեւը ծագած չէր , Արամ և Արամի քաջերը յարձակելով կոտորեցին Նիւքարի զինուորները , ասդին անդին փախցուցին և մաս մըն ալ գերի բռնեցին :

Արամ գերի բռնեց նաև Նիւքարը և զրկեց Արամաւիր քաղաքը . հրամայեց որ անոր աշտարակին ծայրին գամեն Նիւքարը՝ ճակատէն , որ ամէն անցորդ , եկող ու գացող տեսնայ թէ Արամը ինչպէս վրէժ կը լուծէ իր հայրենիքը կոխտողներէն : Այս յաղթութենէն ետքը Արամ իրեն հպատակեցուց Սեղացոց երկիրը :

Հայաստանի հարաւային կողմն ալ ուրիշ իշխան մը կորդուաց լեռներէն անցեր էր և երկիրը ոտնակոխ կ'ընէր , ծանր տուրքեր կ'առնէր , այդ իշխանին անունն էր Բարշամ :

Արամ իր քաջերով յարձակեցաւ նաև անոր վրայ . թշնամիներէն շատերը սուրով սպաննուեցան , շատերն ալ փախան : Բարշամն ալ սպաննուեցաւ :

Ասորեստանցիները , որոնք Բարշամի ազգէն էին և անոր հպատակ էին , չհաւատացին ոտ Բարշամի պէս քաջ և ուժեղ մարդ մը կրնայ մեռնիլ , և շատ դար աստուծոյ տեղ դնելով կր պաշտէին :

Արամ ասորեստանցիներու երկրին մէկ մասն ալ հպատակեցուց իրեն :

Հարցումուն . — Ո՞վ էր Արամ և ինչպէս մեկն էր . — Մեղացոց իշխանը ինչ ըրաւ Հայերուն . — Արամ ինչ ըրաւ Նիւքարին . — Ո՞վ էր Բարշամ . — Արամ ինչ ըրաւ անոր . — Ասորեստանցիները ինչու կը պաշտէին Բարշամը :

Բարոյակոն րելադուրիւն. — Ուսուցիչը կրնայ Արամի կետնքէն ու գործերէն այն դասը հանել թէ՛ ինքնազաշտպանուած թիւնը ինչպէս անհրաժեշտ պարտականութիւն է մարդու համար, նայնպէս արդար վրէժխնդութիւնը պէտք է չարերը պատժելու և տկարները բռնաւորներու ձեռքէն ազատելու համար:

Է. ԴԱՍ

ԱՐԱՄ ԵՒ ՊԱՅԱՊԻՍ

Արամ քաջ նահապետը իր երկու թշնամիները ոչնչացնելէն ետքը, իր միւս թշնամիին վրայ խորհեցաւ:

Այդ միւս թշնամին Պայապիս իշխանն էր, որ Հայաստանի արեւմտեան կողմը կը գտնուէր: Այս հսկան շատ զորաւոր էր և մեծ ոյժ ունէր: Ուստի մեծ պատրաստութիւններ տեսնելով յարձակեցաւ Պայապիսի վրայ:


Կռիւին մէջ հսկաները հսկաներու դէմ ելան: Պայապիսի զինուորները յողթուեցան, սկսան ցիր ու ցան ըլլալ, ամէն կողմ փախչիլ, մեծ մաս մըն ալ շարդուեցաւ Արամի քաջերէն: Այն ժամանակ Պայապիս միս մինակը փախաւ պատերազմի դաշտէն, գնաց հեռու երկիր և ա՛լ անունը չլուեցաւ:

Պայապիսի երկիրը Արամ միացուց իր երկիրին և անոր վրայ կառավարիչ մը դրաւ Մշակ անունով մէկը, որ իր ազգականներէն մէկն էր:

Հրամայեց որ այդ կողմի բնակիչները հայերէն սորվին և հայերէն խօսին:

Սակայն այդտեղի մարդերը շատ դժուար կը սորվէին հայերէնը:

Մշակ այդ երկրին մէջ քաղաք մը շինեց և իր անունով Մշակ կոչեց, բայց տեղացիները չկրնայով այդ անունը հնչել, Մաժակ կ'ըսէին: Յետոյ այդ քաղաքը կոչուեցաւ Կեսարիա, հիմակ Թուրքերը Գալսերի կ'ըսեն:



Մաժակ կամ Կեսարիա

Արամ ուրիշ քաջութիւններ ալ ըրաւ և իր երկիրը կառավարեց խաղաղ կերպով:

Թագաւոր մը կար Հայաստանի հարաւային կողմը. անոր անունը Նինոս էր. Բէլի սերունդէն

էր. նա չինեց Նիկուէ անունով քաղաք մը և փառաւոր պալատի մը մէջ կը բնակէր :

Նինոս իմանալով որ Հայկը սպաննած է իր մեծ պապը՝ Բէլը, կ'ուզէր յարձակիլ Հայոց վրայ և վ էթ լուծել, Բայց Արամի քաջութիւնները լսելով վախշաւ : Ուստի մարդ զրկեց Արամի մօտ և յայտնեց թէ ինքը բարեկամն է Արամին :

Անոր իրաւունք տուաւ կրելու մարգարիտէ վարսակալ (մազերուն շուրջը կապուող գլխու զարդ) և կոչուելու իրմէ ետքը՝ աշխարհիս երկրորդը : •

Հատցարան. — Ո՞վ էր Պայպիս. — Արամ ինչ քրաւ անոր գինուրները. — Պայպիս ո՞ր փախաւ. — Մէջտեղ ելա՞ւ. — Պայպիսի երկրին վրայ ո՞վ եշխան դրուեցաւ. — Մշակ ինչ մը շինեց. — Մատակը ինչ կը կոչուի հիմակ. — Նինոսը ո՞վ էր. — Ինչ կ'ուզէր ընել. — Արամին ինչ իրաւունք տուաւ :

Բարոյական բեյադուրի. Գ. — Կրկնել նախորդ գասի բարոյական թելադրութիւնը, քիչ մը աւելի լայն կերպով, ճոյց տալ Նինոսի կեղծաւորութիւնը, Արամի անվերհերութիւնը և մեծանշանութիւնը, երբ մարդ քալ է, անկեղծ ու վեհանշն, իր թշնամիներն իսկ կը խոտարհին ու կը խոտոտանին անոր առաքինութիւնները :

Ը. Դ Ա Ս

ԱՐԱ ՓԵՂԵՅՅԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Արամ նահապետի քաջութեան անունը այնքան մեծ էր, որ անոր մահէն ետքը Նինուէի

թագաւորը Նինոս, չհամարձակեցաւ Հայաստանի վրայ յարձակիլ, բարեկամ եղաւ նաև Արամի որդիին Արայի հետ :

Արա շատ գեղեցիկ էր. մարդ չկար որ անոր վրայ չհիանար :

Արայի գեղեցկութեան համբաւը հասաւ Նինուէ : Նինոսի կինը Շամիրամ թագուհին ալ շատ գեղեցիկ էր. երկար էին անոր ոսկեթել մազերը, աչքերը խոշոր ու սիրուն էին, այտերը կարմիր մէկ մէկ խնձոր, բերանը փոքր, չրթունքը՝ վարդի թեր :

Նինուէի բնակիչները իրենց թագուհիին գեղեցկութիւնովը կը պարծենային : Բայց Շամիրամ երբ իմացաւ Արայի գեղեցկութիւնը, սկսաւ միշտ անոր վրայ մտածել : Արայի կարօտէն կը մաչէր, բայց յայտնի չէր ընել, որովհետև իր ախուսինը դեռ ողջ էր :

Բայց երբ Նինոս մեռաւ, սկսաւ Շամիրամ կառավարել իր երկիրը, քանի որ զաւակները դեռ մանկահասակ էին : Շամիրամ թանկագին ընծաներով մարդ զրկեց Արային և ըսաւ .

— Արա՛, ինձի ամուսին եղիր և ես կ'ըլլամ քեզի կին : Քեզի կուտամ Նինոսի ընդարձակ երկիրները, քեզի կը հնազանդին աշխարհի բոլոր թագաւորներն ու իշխանները : Մենք երկուքս կը փայլինք գահին վրայ երկու աստղերու պէս : Շուտով եկուր ինձի, ո՞վ իմ աննմանս :

Այսպէս կ'աղաչէր Շամիրամ: Իսկ Արան որ իր բոլոր հոգիով ու սիրտով կապուած էր իր Նուարդ անուն կնոջը, արհամարհեց Շամիրամի խնդիրքը և մերժեց անոր հրաւերը:

Շամիրամի զրկած մարդերը ետ դարձան և զմայլելով նկարագրեցին Արայի աննման գեղեց-



Արայի գիակը Շամիրամի առջեւ

կութիւնը: Շամիրամ ուրիշ մարդեր և ընծաներ զրկեց, բայց չկրցաւ Արայի սիրտը գրաւել:

Այն ժամանակ որոշեց բռնի ստիպել Արան որ ընդունի իրեն առաջարկը: Հաւաքեց իր բազմաթիւ և բազմալեզու զինուորները ու յարձակեցաւ Արայի երկիրը: Արա անոր դէմ ելաւ իր քիչ մարդերով:

Շամիրամին նպատակը Արան սպաննել չէր:

ուստի նա իր զինուորներուն պատուիրեց որ Արան չսպաննեն, ողջ իրեն բերեն:

Կռուիլ տաք ժամանակը Շամիրամի զինուորները չկրցան Արան ճանչնալ անոր քաջերուն մէջէն և պատահամբ սպաննեցին զայն: Շամիրամ սկսաւ լալ և կոծել. մարդեր զրկեց որ մեռելներուն մէջէն Արայի գիակը փնտռեն, գտնեն ու իրեն բերեն: Գտան և բերին:

Շամիրամ սկսաւ սուգ և ողբ ընել, մազերը կը փետէր և կ'ողբար իր սիրելիին մահը: Եւ կ'ըսէր թէ անկարելի է որ այսպիսի գեղեցիկ ու քաջ մէկը մեռնի:

— Տարէ՛ք, զինուորներ, տարէ՛ք այս գիակը իմ պալատի տանիքը: Պաղատինք, խնդրենք Առից աստուածներուն, որ գան լիզեն Արայի վէրքերն ու կենդանացնեն զայն: Այսպէս կը պատուիրէր Շամիրամ:

Երբ Արայի մարդիկն իմացան որ իրենց նահապետը սպաննուեր է և գիակը թշնամիին ձեռքը կը գտնուի, շտեմնուած անպատուութիւն համարեցին և սկսան պատրաստուիլ Շամիրամի վրայ յարձակելու համար, որ Արայի մահուան վրէժը հանեն և գիակը խլեն:

Շամիրամ անոնց առջեւը ելաւ և ըսաւ.

— Հրամայեցի իմ աստուածներուն որ Արայի վէրքերը լիզեն և զայն կենդանացնեն:

Մեր հեթանոս պապերը, Շամիրամի հետ,

կր հաւատային թէ Առլէյ աստուածները, որ շինի մարմնով և մարդու կերպարանքով էին, քաջ մեռելները լ զիլով կր կենդանաց են: Ատոր համար համոզուեցան և ա՛նա երկու երեք օր ետքը իմացան որ Արա ողջացիր է:

Արա մինչեւ իր մահը բռնի ստիպուեցաւ մնալ Շամիրամի պալատը:

Հարգաբան.— Արաի որդին ո՞վ էր.— Արա ինչո՞վ նշանաւոր էր.— Շամիրամ ո՞վ էր.— Երբ նինա մեռաւ Շամիրամ ի՞նչ ըրաւ:— Արա ինչո՞ւ չընդունեց Շամիրամի առաջարկը. Շամիրամ որո՞ւ վրայ յարձակեցաւ.— Դատերազմէն առաջ ի՞նչ պատուիրեց իք զինուորներուն. Արա ի՞նչ եղաւ.— Շամիրամ ի՞նչ հրամայեց.— Աւելցնե՞րը ի՞նչպիսի աստուածներ էին և ի՞նչ կ'ընէին.— Հայերը ինչու բարկացան.— Արա ողջնցա՞ւ:


Բարոյակոսի թելադրութիւն — Յաւանքով Արաի ժուժկալու թիւնը, հաւատարմութիւնը իր կնոջ՝ Նաւարդի հանդէպ. Շամիրամի վաւաչոտութիւնը շար բնաւորութիւնը. Առաջինի ու բարի մարդերը աստուածներուն ալ սիրելի կ'ըլլան. անոնք մեռնելէն ետքն ալ կ'ապրին, ինչպէս Արա:

Թ. Դ Ա Ս

ՇԱՄԻՐԱՄԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շամիրամ պատերազմէն ետք սկսաւ պտտիլ Հայաստանի լեռներուն և հովիտներուն վրայ, ծաղկաւէտ դաշտերու մէջ. Նա կը հիանար երկրին գեղեցկութեան վրայ: Օգը մաքուր, աղբիւրները առատ և յստակ, գետերը քաղցրաձայն ու մաքուր:

Խորհեցաւ քաղաք մը շինել և ամարանոց պայտաններ կանգնել: Ամառ ատեն սրանչելի օդա



Վանի բերդի բարձր մասը

փոխութեան տեղ մը կ'ըլլար, իւր ձմեռը կը մտածէր անցընել Նինուէի մէջ, որ Հայաստանէն հարաւ գտնուելուն համար աւելի տաք կ'ընէր:

Նա շատ տեղեր պտտեցաւ և ամէնէն աւելի հաւանեցաւ Աղի կամ Բլլլ-նուրեաց ծովին եզերքը գտնուած բլուրներուն: Ան մի՞մայէս հրամայեց իր բոլոր երկիրներէն բերել տասներկու

հազար կարող և ընտիր գործաւորներ: Երբ հաւարուեցան, նախ հրաման ըրաւ շուրի

ճամբաներ շինել, տեղ տեղ ժայռին մէջ կը փորէին, քարերով կը հիւսէին և ջրուղիներ կը շինէին:

Այդ ճամբայով շատ հեռուէն բերել տուաւ առատ ջուր, և սկսաւ ջրել իր շինելիք քաղաքին դաշտերն ու այգիները:

Այնուհետեւ սկսաւ բուն քաղաքին շինութիւնը: Շինեցին ամուր պարիսպներ պղինձէ



Վանի ֆարաբուրը

դուռներով, իսկ քաղաքին մէջ ընտիր ընտիր երկուկամ երեք յարկով պալատներ, տուններ, որոնք զանազան գոյնով ներկուած էին: Այնպէս որ մէկ թաղը միւսէն կը զատուէր լայն լայն փողոցներով և գոյներով:

Տնկեցին պարտէզներ, ծաղկանոցներ, պլուզատու ծառեր, այգիներ:

Բայց այս բոլոր շինութիւններուն մէջ ամէնէն փառաւորը քաղաքին ծայրը շինել տուածն էր: Քաղաքին հարաւային ծայրը բարձր ժայռ մը կար. անոր գագաթը պարիսպներ շինել տուաւ և բերդ մը կանգնեց. իսկ մէջը, ապառաժին մէջ, փորել տուաւ և շինեց սենեակներ, դահլիճներ, գանձատուններ, մառաններ:

Ժայռին դուրսի երեսն ալ ողորկել, շտկել տալով վրան զարմանալի գիրերով իր ըրածները գրել տուաւ:

Այս փառաւոր քաղաքը իրեն անունով կոչուեցաւ Շամիրամակերտ, բայց ժողովուրդը վերջը այդ անունը փոխելով «Վան» կոչել սկսաւ:

Հարցարան. — Շամիրամ հաւնեցա՞ւ Հայոց երկրին. — Ինչո՞ւ. — Ինչ շինել ուզեց. — Ո՞ր ծովին մտ. — Առաջ ինչ շինել տուաւ. — Յետոյ ինչ. — Ամէնէն նշանաւոր շէնքը քաղաքին ո՞ր կողմը կը գտնուի. — Քաղաքը ինչ կոչուեցաւ և որո՞ւ անունով. — Հիմազ ինչ անուն կուտան:

Բարոյական րեյուպուրիւն. — Զգացնել թէ Շամիրամ լաւ բան մ'ըբու ինքզինքը շինարարութեան տալով, բայց բանս ուտոնքը բունի աշխատցները մեծագոյն չարիքն էր: Անոնք օրական հացը հազիւ կը ճարեն, երբ յաճախ կ'ստիպեն որ բունի ու ձրի աշխատին: Շատ անգամ մէկ կամ մէկ քանի հոգիի վայելքին ու քանահաճոյքին համար ամբողջ ժողովուրդներ տառապած են:



Ժ. Դ Ա Ս

Շ Ա Մ Ի Ր Ա Մ Ի Ո Ւ Լ Ո Ւ Ն Ք Ը

Շամիրամ թագուհին ամէն ամառ կ'անցրնէր իր շինած քաղաքի մէջ. Հայաստանի մէջ կ'ապրէր և կը զուարճանար: Իսկ ձմեռը կ'երթար Նինուէ:

Իր բոլոր օրերը կ'անցրնէր ուրախութիւններով, խնջոյք երով՝ բարեկամներուն ու սիրելիներուն հետ: Նինուսի թողուցած գանձերը, հարստութիւնները կը վատնէր: Բնաւ հող չէր տաներ իր որդիներուն փայ:

Անոր որդիները երբ իրենց մօր նրեսին տուին իր չար վարմունքը, այն ժամանակ Շամիրամ սպաննել տուաւ զանոնք, բացի ամէնէն պշտիկ տղէն: Անկէ ետք աւելի ինքզինքը տուաւ զուարճութիւններու:

Կը պատմեն թէ՛ օր մը Շամիրամ դուրս ելած էր ծովին եզերքը զբօսնելու համար. տեսաւ խումբ մը մանուկներ որոնք կը զննէին աւազի մէջէն գտնուած ուլունք մը:

Թագուհին իսկոյն հասկըցաւ ուլունքին զօրութիւնը, առաւ մանուկներու ձեռքէն և փոխարէնը պարգեւներ տուաւ անոնց:

Ուլունքը այնպիսի ոյժ մը ունէր որ Շամիր-

րամ ուզած մարդը իրեն առջի բերել կուտար, ուզածը կը կորսնցնէր, կը հալածեցնէր: Այխարհքը անոր ձեռքը խաղալիք դարձաւ:



Շամիրամի Կար Գնեցելը

Շամիրամի կրտսեր որդին մեծցած էր. ուղեց իր մօրը ձեռքէն ազատուիլ և ազատել այխարհքը: Անոր միացան ազատսէր մարդեր և զինուորներ:

Այդ զինուորները յարձակեցան Շամիրամի վրայ :
 Շամիրամ պատերազմի գնաց իր որդիին
 դէմ, բայց յաղթուելով փախաւ դէպի վան :
 Յաղթող զինուորներէն մէկ քանի հոգի վա-
 զելով հասան անոր ետեւէն, և անոր ձեռքէն
 խլեցին ուլունքը, վազեցին աւելի առաջ որ ու-
 լունքը վանայ ծովը ձգեն :

Յոգնած վիճակի մէջ Շամիրամ քակեց իր եր-
 կար մազերը, ոլորեց, ծայրը քար մը դրաւ և
 սկսաւ դարձնել նետելու համար մարդոց ետեւէն :

Բայց բարկութենէն այնչափ արագ և ուժով
 կը դարձնէր, որ մազերը փեթթուեցան, քարը
 թռաւ և հեռուն ինկաւ, իսկ Շամիրամ յուսա-
 հատութենէն տեղնուտեղը քար կտրեցաւ : Չին-
 ւորները փախցուցին ուլունքը և տարին վանայ
 ծովը նետեցին :

Հարցարան. — Շամիրամ ինչպէս կ'անցընէր իր կեանքը,
 մ.թ. — իր տղաքներն ինչ ըրաւ. — Երկրորդ պտտած ատեն ինչ
 տեսաւ. — Ուլունքն ինչ զօրութիւն ունէր. — Կրտսեր տղան ինչո՞ւ
 պատերազմի ելաւ. — Ուլունքը ինչ ըրին. — Շամիրամ կեցած տեղը
 ինչ դարձաւ :

Ինտոյակիան թիւօղրուրիւն. — Հարկ է շեշտել Շամիրամի
 ծնողական պարտականութեան թերացումը, նա ոչքազօրծ եղաւ
 մղուելով իր պճնասիրութենէն ու զեղխութենէն : Նոյնիսկ իր հա-
 բազատէն պատժուեցաւ սակայն :

ԺԱ. Դ Ա Ս

Ա Ն Ո Ւ Շ Ա Ի Ա Ն

Արա գեղեցիկ երբ մեռաւ, իր նուարդ կնոջ-
 մէն տղայ մը ունէր, որ տասներկու տարեկան
 էր, Կադմոս անունով :

Շամիրամ Արայի մեռնելէն ետքը, անոր
 տասներկու տարեկան տղուն անունը դրաւ Արա,
 Արա գեղեցիկը շատ սիրած ըլլալուն համար : Հա-
 յաստանի իշխանութիւնն ալ յանձնեց փոքրիկ
 Արային :

Փոքրիկ Արան մեծցաւ, ամուսնացաւ և զաւակ
 մը ունեցաւ, անոր անունը գրին Անուշաւան :
 Երբ փոքրիկ Արան կամ Կադմոս ալ Շամիրամի
 հետ մէկտեղ պատերազմած ժամանակ սպաննուե-
 ցաւ, անոր յաջորդեց Անուշաւան :

Արամ քաջ էր, Արա գեղեցիկ էր, իսկ Անու-
 շաւան՝ խելացի, իմաստուն : Անիկա շատ շնորհալի
 էր և անուշեզու : Նա կը կոչուէր Սօս, որովհե-
 տեւ պզտիկ եղած ատեն նուիրուած էր սօսի
 ծառերու անտառին :

Մեր պապերը կը պաշտէին սօսի (գաւազ)
 ծառը, և ուրիշ մէկ քանի ծառեր, որովհետեւ կը
 տեսնէին որ ծառերը ինքնիրեն կ'աճին կը մեծ-
 նան. կը կարծէին թէ անոնց մէջ հոգի կայ,

ին պէս որ մարդուն մէջ հոգի կենալով կը մեծ-
նար :



Անուշաւան սօսիներուն կը նուիրուի

Ամէնէն աւելի կը պաշտէին սօսին և ինը-
զինքնին անոնց կը նուիրէին, որովհետեւ կը կար-
ծէին թէ անոր տերեւներուն խշրտոցները իրենց
մեռնող հայրերուն հոգիներուն ձայնն է : Անոր
տերեւներուն սօսափիւնէն կամ ձայներէն գուշա-
կութիւններ կ'ընէին մեր պապերը :

Անուշաւան Շամիրամի և իրեն հօրը Արայի
մեռնելէն ետք նինուէ տարուեցաւ, առաջ իբրեւ
գերի, բայց իր խելացութիւնովը և բարեկամսե-

րու օգնութեամբ իրաւունք ստացաւ իր հայրենի
երկիրը կառավարելու, պայմանաւ որ տուրք վճարէ
Ասորեստանցիներուն :

Այսպէս առաջին անգամ Հայաստանը հար-
կատու եղաւ Ասորեստանցիներուն :

Հարցարան — Արա Գեղեցիկ որդի ունէ՞ր. — Շամիրամ ինչ
դրաւ անոր անունը. — Փոքրիկ Արաւ տղայունէ՞ր, ինչ անունով. —
Անուշաւան ինչ՞ու Սօս կը գոչուէր. — Մեր պապերը ինչ բանով
ծառերը կը պաշտէին. — Սօսիներու տերեւներու ձայներէն ինչ
կ'ընէին. — Անուշաւան ո՞ւր տարուեցաւ. — Ինչպէս իշխան ըլլաւ
իրաւունք վաստկեցաւ. — Հայաստան ինչ եղաւ Ասորեստան-
ցիներուն :

Ասորոյսկան քննադրութիւն. — Պէտք է աշակերտներու
միտքերը պատրաստել այն բանին որ հին մարդիկ աւելի միամիտ,
աւելի տգէտ էին քան հիմակուան մարդերը, բայց անոնք յան-
ջաւոր չեն, իրենց ժամանակն էր այդպէս : 1000 տարի ետքը ե-
կողները մեզի չպիտի հաւնին : Պէտք է ցուցնել նաև Հաւորան
բնապաշտական կրօնքին վե՛րութիւնը. Հայերը գէթ չեն պաշտած
սօսին ու սխտորը, այլ հսկայ սօսիներ, դարաւոր ծառեր :

Ժ. Բ. Մ

Պ Ա Ր Ո Յ Ր

Անուշաւանէն ետք Հայաստանի նահապետ-
ները որդիէ որդի կառավարեցին իրենց երկիրը,
և նինուէի թագաւորներուն տուրք տուին : Ասո-
րեստանի թագաւորները իրենց շրայլութեամբ,

չարութեամբ և զեղխութիւններով իրենց երկիրը
աղքատացուցին :

Ասորեստանի արեւելեան կողմը երկիր մը
կար , ուր կը բնակէին Մարերը կամ մեդացիները :
Մեդացի Նիւքարի երկիրն էր ատ :

Այդ երկիրն թագաւորն էր Կիաքսար : Նա
իր զինուորները կանոնաւորեց : Իր խորամանկու-
թեամբ և խելացութեամբ բարեկամ եղաւ իրեն
մօտ գտնուող իշխաններուն հետ :

Բարեկամ եղաւ նաև Հայոց նահապետին
հետ : Հայոց նահապետն էր այդ ժամանակ Պա-
րոյր իշխանը , որ շատ խելացի և քաջ մէկն էր :

Կիաքսար և Պարոյր , Բաբելոնի իշխանին հետ ,
յարձակեցան Նինուէ քաղաքին վրայ , քաղաքը
պաշարեցին և գրաւեցին :

Պարոյր Կիաքսարի հետ մէկտեղ կռուած
ըլլալուն համար թագաւորական թագ ընդունեց
Կիաքսարէն և Հայոց առաջին թագաւորը եղաւ :

Հարցաւոր.— Անուշաւանէն ետք հայ նահապետները Ասորեստանի ինչ կուտային . — Մինչև ո՞ր նահապետը տուրք տուին . — Պարոյր որով հետ բարեկամացաւ . — Կիաքսար ո՞ր քեզին թագաւորն էր . — Կիաքսար և Պարոյր ինչ ըրին Նինուէն . — Պարոյր ինչ պարգեւ ընդունեց Կիաքսարէն :

Թարգմանիկի քերականութիւնը . — Շեշտել ամէնէն աւելի Նինուէի թագաւորներու շուայութիւնն ու զեղխութիւնը , որ պատճառ եղաւ երկիրն աղքատութեան և իշխանութեան անկումին : Չաշխատող , ծոյլ մարդերն ու ազգերը ուշ կամ կանուխ կ'իյնան , կը կորսնցնեն իրենց ունեցածը և ուրիշներուն գերի կամ ծառայ կ'ըլլան :

ԺԳ. Դ Ա Ս

ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ ԵՒ ԱԺԴԱՀԱԿ

Պարոյրէն ետք իններորդ թագաւորն էր
Երուանդի որդի Տիգրանը : Սա մեր թագաւոր-
ներուն ամէնէն զօրաւորը , ամէնէն իմաստունը և
քաջն էր :

Մեր պապերն ու գուսանները այսպէս կը
նկարագրէին Տիգրանը .

Անոր մազերը չէկ էին և գանգուր , երեսը
զուարթ , սպիտակ ու կարմիր , աչքերը քաղցրա-
ժըպիտ , կազմուածքը ուժեղ , թիկունքը լայն ,
ազդրները լեցունկեկ , ոտները գեղեցիկ , իսկ ինքը
պարկեշտ էր և չափաւոր՝ ամէն բանի մէջ , թէ
կերուխումի մէջ և թէ զուարճութիւններու մէջ :
Նա ամէնքին վրայ հաւասար աչքով կը նայէր ,
արդար էր և գթած :

Տիգրան լաւ բարեկամ էր նաև Պարսից Կիւ-
րոս իշխանին հետ :

Մարաց Աժդահակ թագաւորը կասկածանքով
կը նայէր Տիգրանի և Կիւրոսի բարեկամութեան
վրայ : Նա միշտ կը մտածէր թէ չըլլայ որ Տիգրանն
ու Կիւրոսը միասին իր վրայ յարձակին :

Աժդահակ իմացեր էր որ Տիգրան իր զօրքը
կարգաւորած է . ձիաւոր կամ հեծեալ զինուոր-

ները զստ, հետեւակները, աղեղնաւորները զստ, սուսերաւորները, վահանակիրները, զրահակիրները բազմացուցեր է:

Աժդահակ անոր այս ոյժէն կը սուկար: Իւ ամէն ժամանակ կը խորհէր կիրոսի և Տիգրանի բարեկամութիւնը քակել ու մեծ մտատանջութեան մէջ էր:



Աժդահակի երազը

Գիշեր մը սուկալի երազ մը տեսաւ, տեղէն վեր թռաւ ու կէս գիշերին իր մօտ հրաւիրեց խորհրդականները: Անոնք հաւարուեցան. տեսան որ թագաւորը տրտում տխուր կը մտածէ:

Հարց ւցին թէ ի՞նչ է պատահեր. պատասխան չտուաւ. բայց վերջապէս ցաւած սրտով սկսաւ պատմել.

«Այ՛ տր երազիս մէջ իբրև թէ անծանօթ երկիր մը կը գտնուէի. ինձի ըսին թէ այդ երկիրը Հայաստանն է: Բարձր լեռան մը քով կը գըտնուէի:

Այդ լեռան գագաթին վրայ նստած էր բարձրահասակ և գեղեցիկ կին մը, որ ծիրանի հագած էր՝ երկնային քօլն երեսին վրայ:

Եւ երբ հիացած կը նայէի, տեսայ որ կինը ծնաւ երեք կատարեալ դիւցազներ (քաջեր): Անոնցմէ առաջինը առիւծի մը վրայ հեծաւ ու թռաւ դէպի արեւմուտք, երկրորդը ինձի մը վրայ նստաւ և դիմեց դէպի հիւսիս, իսկ երրորդը ահագին վշապ մը սանձեց և յարձակեցաւ իմ տէրութեան վրայ:

Յանկարծ երազս խառնուեցաւ. մէյ մ'ալ ինքզինքս գտայ իմ պալատի տանիքին վրայ, որ զարդարուած էր: Հոն կանգնուած էին մեր աստուածները, իսկ ես ձեզի հետ զոհ կը մատուցանէի և խունկ կը ծխէի:

Մէկ մ'ալ վեր նայեցայ. տեսայ որ վիշապին վրայ նստողը, արծիւի նման թեւեր առած, դէպի ինձ կը թռչի և կ'ուզէ աստուածներս կործանել: Աստուածներուն և անոր միջև նետուեցայ, հարուածը ես ընդունեցի. սկսանք կռուիլ: Արիւնը

սկսաւ վազել և տանիքը ծածկուեցաւ իմ արիւնով :

Այս սոսկալի վիճակին մէջ արթնցայ և տեսայ որ սաստիկ քրտնած եմ : Ձեզ կանչել տուի որ ինձի խորհուրդ տար :

Այսպէս պատմեց Աժդահակ և սպասեց որ խորհրդականները իրենց կարծիքները ըսեն : Գալ դասին կը տեսնենք թէ ինչ խորհուրդ ըրին :

Հարցումս. — Ո՞վ էր Տիգրան, ինչպէս մարդ էր. — Ինչ բարեկարգութիւններ ըրաւ. — Որո՞ւ բարեկամ էր. — Ով էր Աժդահակ. — Ինչո՞ւ կը վախնար Տիգրանէն. — Երազին մէջ ո՞ր երկիւթը կը գտնուէր Աժդահակ. — Կի՞նք քանի՞ տղայ ծնաւ. — Առաջին ազան ինչի՞ վրայ նստեցաւ և ո՞ւր գնաց. — Երկրորդը. — Երրորդը. — Աժդահակ իր տանիքին վրայ ինչ կ'ընէր. — Ո՞վ յաղթուեցաւ. —

Բարոյական քիտղոսութիւն. — Ուսուցիչը կրնայ ծանոթանալ Տիգրանի առաքինական յատկութիւններէն արդարատեբութեան, բարութեան, նաներկիւղ քաջութեան վրայ ևն. : Գէտք է շեշտել նաև Տիգրանի բարեկամութիւնը, որ մտերմական էր Կիւրոսի հետ : ձմարիտ բարեկամներ անոնք են որ անխարդախ ու անձնուէթ են. Տիգրան անզուգական բարեկամ մըն էր Կիւրոսի :

ԺԴ. Դ Ա Ս

ԱժԴԱՀԱԿ ԵՒ ՏԻԳՐԱՆՈՒՀԻ


Աժդահակ և իր խորհրդականները մտածեցին և որոշեցին Տիգրանը խարդախութիւնով սպաննել կամ թունաւորել :

Աժդահակ նամակ մը գրեց Տիգրանին. նամակին մէջ գրուած էր. «Սիրելի եղբայրութիւնդ գիտէ որ աստուածները օգտակար բան մը սորվեցուցած են մեզի. այն է՝ սիրելիներու և իմաստուն բարեկամներու թիւը շատցնելը : Տեսնելով որ եթէ բարեկամանանք մեծ օգուտներ պիտի ձեռք բերենք, կը խնդրեմ որ չգու ինձ կնութեան տաս Հայոց օլիորդը, քու քոյրդ՝ Տիգրանուհին, եթէ անոր բարիքը կ'ուզես, նա իմ մօտ պիտի ըլլայ թագուհիներու թագուհի : Ողջ եղիր, մեր թագակիր և սիրելի եղբայր» :

Տիգրան այս նամակը ստանալով բան մը չի կասկածիր և իր քոյրը կը շրկէ Մարաստան : Աժդահակ Տիգրանուհին սիրով կ'ընդունի և Տիկիններու Տիկին կը նշանակէ, ոչ թէ որովհետև միտքը չար էր, այլ որովհետև Տիգրանուհի շատ գեղեցիկ էր : Անկէ ետք բան մը չէր ըներ լառանց անոր խորհուրդին :

Օր մը Աժդահակ Տիգրանուհին իր քով հրաւիրելով ըսաւ.

— Դուն չես գիտեր թէ որչափ նախանձոտ է Տիգրանի կինը Չարուհին. նա աչք տնկած է քու տիկնանց տիկնութեանդ վրայ և մեր դէմ կը գըրգըռէ Տիգրանը : որպէս զի Տիգրան Մարերու թագաւոր ըլլայ և ինքն ալ թագուհի : Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը : Հնար մը գտիր այս խայտառակութեան վերջ մը գտնելու համար :



Աժգահակ Տիգրանուհին է՛րնդունի

Տիգրանուհի շուտով հասկցաւ Աժգահակի միաբը: Նա միամիտ ձեւազաւ. սիրոյ խօսքերով հաւատացուց Աժգահակը իբր թէ ինքն ալ այդ լուրէն վշտացած է և իբր թէ միջոցներ կը մտածէ եղբօրը և Զարուհիին թակարդէն ազատելու համար:

Բայց գաղտնի կերպով, մտերիմ մարդերու ձեռքով իմացուց Տիգրանին՝ Աժգահակի չար դիտաւորութիւնը:

Հարցաւորան.— Աժգահակ և իր խորհրդակալները ի՞նչ խօսեցան.— Աժգահակ ի՞նչ նամակ գրեց Տիգրանի.— Տիգրանուհին ի՞նչպէս ընդունեց.— Օր մը ի՞նչ ըսաւ Տիգրանուհի.— Տիգրանուհի հասկցաւ անոր չար մտօքը. ի՞նչ ըսաւ:

Բարօյակոսն քիսողութիւն. — Բեղուն նիւթ մըն է այս, բարօյակոսն թելադրութեան տեսակետով, կարելի է վեր առնել Տիգրանուհիի եզրայտասիրութիւնն ու արդարատեսիլութիւնը, ինչպէս և ուշիմութիւնը, նմանապէս Աժգահակի չարամտութիւնը:

ԺԵ. Դ Ա Ս

ՏԻԳՐԱՆԻ ԵՒ ԱՅԻՍՏՅԱԿԻ ԿՈՒՒԻԸ

Աժգահակ մարդ զրկեց Տիգրանին ու ըսաւ.

— Շուտով եկուր զիս տեսնելու մեր երկիրներուն սահմանագլուխի մօտ, շատ կարեւոր ըսելիքներ ունիմ:

Տիգրան իմացաւ Աժգահակի չար նպատակը. անմիջապէս ընտիր գունդեր կազմեց, զինուորներուն զէնք տուաւ և գնաց Մարաց աշխարհին վրայ:


Տիգրան կը խորհէր իր քրոջ Տիգրանուհիի մասին. կը մտածէր թէ ի՞նչպէս ազատէ:

Հնարքով մը իր քոյրը ազատելէ ետք արձակ համարձակ առաջ գնաց, կուռեցաւ Աժգահակի զինուորներուն հետ և յաղթելով անոնց շատերը սպաննեց ու շատերն ալ փախցուց:

Աժգահակն ալ այդ պատերազմին մէջ մեռաւ Տիգրանի նետի հարուածէն: Այսպէս ինկաւ Մարաց տէրութիւնը: Աժգահակի առաջին կինը, Անոյը, և Աժգահակի ցեղէն բազմաթիւ աղջիկներ ու պատանիներ գերի ինկան Հայոց ձեռքը: Տիգ-

րան իր սիրելի, գեղեցիկ և իմաստուն քոյրը՝ Տիգրանուհին բնակեցուց իր շինած Տիգրանակերտ քաղաքին մէջ։ Իսկ Աժդահակի գերինները բնակեցուց Մասիս լեռան մօտերը։

Աժդահակի ամբողջ երկիրը Տիգրան շնորհեց իր մտերիմ բարեկամ Կիւրոսին, որ Պարսից թագաւորն էր։



Տիգրանակերտ (Ֆարդին)

Տիգրան հարուստ երկիր մը դարձուց Հայաստանը, մեղր ու կարագով կերակրեց մեծն ու պզտիկը. անոր օրով հայ ժողովուրդը երջանիկ էր՝ Յեսոյ Հայերը միշտ երանի կուտային անոր օրով ապրողներուն և կ'ըսէին.

— Երանի՛ թէ մենք ալ Տիգրանի ժամանակ ծնած ու ապրած ըլլայինք։

Հարցումս. — Աժդահակ ի՞նչ գրեց Տիգրանի. — Տիգրան ի՞նչ ըրաւ. — Յաղթե՞ց. — Իր քոյրը ո՞ւր բնակեցուց. — Մարաստանը որո՞ւտըսեցաւ. — Հայերը ի՞նչպէս կ'ապրէին Տիգրանի օրով.

Բարոյական քննադատութիւն. — Թելադութեան նիւթ պէտք է ընել Տիգրանի անկեղծութիւնն ու քաջութիւնը, Աժդահակի անբարեխղճութիւնը և պատժուիւրը.

ԺԶ. Դ Ա Ս

Վ Ա Ն Ա Գ Ն

Այն դարերուն երբ կ'ապրէին Հայկը, Արամը և Տիգրան Երուանդեանը, Հայոց աշխարհի բնակիչները դեռ հեթանոս էին։ Անոնք չէին ճանչնար մէկ Աստուածը, այլ կը պաշտէին բազմաթիւ աստուածներ։

Իրենց գլխին վրայ տարածուած կը տեսնէին ընդարձակ երկնակամարը։ Անիկա կարծես թէ մէկ ծայրէն միւսը գրկած է երկիրը։ Ան ճամբայ կուտայ երբեմն արեւին, երբեմն լուսինին. անհամար աստղերով կը պսպղայ, մէյ մը կը լուսաւորուի, մէյ մը կը խաւարի։

Ան կը զրկէ անձրեւի օգտակար կաթիլները։ Մեր պապերը այնպէս կ'ընդունէին թէ երկինքը կենդանի է սկի մըն է, հզօր աստուած մըն է և կը պաշտէին զայն։

Մեր պապերուն համար երկիրն ալ կենդանի

էակ մըն էր, որովհետեւ ան իր մէջ կը պահէ սերմերը անեցնելու զօրութիւնը: Կը բանայ անթիւ և հոտաւէտ ծաղիկներ, կը սնուցանէ անհամար կենդանիներ: Երկիրը ո՞րքան բարիքներ կուտայ մարդուն:

Հեռաւոր հորիզոնին վրայ երկինքն ու երկիրը իրարու միանալով իրար կը համբուրեն: Ամէն լուսադէմի խաւարը կը կռուի լոյսին հետ, երկինքն ու երկիրը կարծես կը ցնցուին, կը շարշարուին. արիւն կը թափի և կարմիր կը ներկուի երկնային մեծ ծովը:

Կամաց կամաց երթալով կը բոցավառի այն կողմը. կարծես թէ եղէգներ կը վառին արեւելքի կողմը, կարծես ծուխ կը բարձրանայ դէպի վեր և յետոյ կարծես թէ բոցեր կ'ելնեն ու կը լուսաւորեն երկինքը:

Եւ ահա յանկարծ այդ հրդեհին մէջէն դուրս կը վազէ զուարթ արեգակը, նոր արթնցած կարմիր երեսներով մանուկի մը պէս: Ո՞րքան կարմիր է անոր դէմքը և կլոր: Խարտեաշ ոսկեգոյն է նա. գլխի մազերը կը վառին կրակի պէս, իսկ մօրուքը բոցեղէն է:

Մեր հայրերը կը պաշտէին ծագող արեւը, երկինքի և երկրի ծիրանի ծովին զաւակը, որ Վահագն կը կոչուէր: Երբ աղօթէին երեսներն դէպի անոր կողմը, դէպի արեւելք կը դարձնէին:

Անոր համար շատ տեղ փառաւոր մեհեանս

ներ, տաճարներ կանգնած էին, և ամէն տարի, Վանատուր աստուածի տօնին նման, Վահագնի տօնին ալ մեծ հանդէսներ կը կատարէին, ամէն կողմերէ ուխտաւորներ կուգային, կ'երգէին ու կը զուարճանային:

Այդ փառաւոր մեհեաններէն մէկը կը զբոնուէր Հայոց Աշտիշատ քաղաքին մէջ: Երբոր Հայերը քրիստոնեայ եղան, Վահագնի մեհեանին տեղ կանգնեցին Ս. Կարապետի եկեղեցին, և անոր բոլորտիքն ալ շինեցին Ս. Կարապետի վանքը:

Հարցարան.— Հայկի, Արամի ժամանակ Հայերը քրիստոնեայ էին թէ ոչ.— Մէկ աստուած կը պաշտէին թէ՛ շատ.— Երկինքը իբրեւ ինչ կը նկատէին.— Հապա երկիրը.— Արեւը ինչի՞ կը նմանօքնէին.— Անունը ինչ դրած էին:

Քարոյակահ քիլադուրիւն.— Կարելի միջոցներով դգացնել մանուկներուն թէ չին Հայերու պաշտամունքը շատ աւելի բարձր էր քան շատ մը ուրիշ հին ժողովուրդներունը: Շեշտել արեւի ծագման վրայ հայ վառվառուն երեւակայութեան գիւտերը, մասն կան հասկնալի բառերով:

ԺԷ. Դ Ա Ս

ՎՕՀԱԳՆ ԵՒ ՅԱՐԿՈՂ

Սիրելի մանուկներ,

Անցեալ դասին ըսի ձեզի թէ մեր պապերը ամէն տարի մեծ հանդէսով կը տօնէին Վահագնի տօնը: Այդպիսի տօներէն մէկին մէջ Գուսանը իր

քաղցրաձայն նուագարանով կ'երգէր Վահագնի վրայ շինուած սա երգը.

«Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծիրանի ծով.

Երկն ի ծովուն ունէր
Զկարմրիկ եղեգնիկն .

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր .

Նա հուր հեր ունէր .

Ապա թէ բոց ունէր մօրուսն,
Եւ աչկունքն էին արեգակունք :» (1)

Գուք չէք հասկնար այս երգին լեզուն, որովհետև հին հայերէնով գրուած է. մեր հին հայրերը և Գուսանները այս լեզուով կը խօսէին և կ'երգէին . մենք հիմակնոր հայերէնով կը խօսինք :

Երբորվերի կարգերը ելնէք, դուք ալ պիտի կրնաք հասկնալ այդ հին հայերէնը : Տեսէք հիմակ ես պիտի թարգմանեմ և հասկցնեմ թէ ինչ ըսել կ'ուզէ .

Երկինքը կը տանջուէր (երկունքի մէջ էր),
Երկիրը կը տանջուէր .

(1) Այս երգին կտորը դրուած է հոս ոչ թէ աշակերտին կարգացնելու, այլ ուսուցչին յուշարար մ'ըլլալու համար. ինչպէս կը տեսնուի ուսուցիչը այս երգը պիտի կրնայ իբրև առիթ նկատել հին և նոր հայերէնի գոյութեան տարբական ծանօթութիւնը տալու համար սաներուն .

Ծիրանի, կարմրուկ եղեգն ալ կը տանջուէր.
Ծովին մէջի կարմրուկ եղեգն ալ կը տանջուէր.
Եղեգնի խողովակէն ծուխ կ'ելնէր,
Եղեգնի խողովակէն բոց կ'ելնէր ,



Յարգողի ճանապարհը

Եւ բոցին մէջէն պատանի մը կը վազէր .

Նա կրակ մազեր ունէր ,

Մօրուքն ալ բոց էր .

Եւ աչքերը մէյմէկ արեգակ էին :

Վահագնը սիրուն պատանի մըն էր, քաջ աստուած մը : Անոր վրայ մեր հայրերը ուրիշ բաներ ալ կը պատմէին :

Օրինակ՝ օր մը երկինքի մէջ կով աստուած-

ներուն յարդը պակսեցաւ : Այդ կովերը երկինքի
ամպերն են , որոնց ստինքներէն կաթինման անձ-
րև կը վազէ :

Երբ յարդը պակսեցաւ , Վահագն գնաց Ա-
սորոց Բարշամ նահապետին մօտ և անոր յարդը
գողնալով երկինք փախաւ :

Բայց արագ փախած ատենը ճամբան յարդը
թափթփեցաւ . մինչև հիմակ ալ երկնակամարին
վրայ կ'երեւի այդ սպիտակ հետքը , որ կը կոչուի
Յարդգողի ծանապարհ :

Հայաստանի մէջ մարդեր կային որ կ'ըսէին
թէ Վահագնը աստուած չէր . անիկա մարդ էր ,
Տիգրանի որդին էր , որ իրեն քաջութիւններուն
համար իբրև աստուած պաշտուեցաւ : Ուրիշ ազ-
գեր ալ Հայերէն առնելով Վահագնը իբրև
աստուած կը պաշտէին :

Հարցաւան . — Գուտնը Վահագնին երգը հի՛ն հայերէնով
կ'երգէր թէ ո՞ր հայերէնով . — Օրո՞ւն է այդ երգը թէ ո՞ւր . — Երգը
ի՞նչ կ'ըսէ Վահագնի համար , երիտասարդ կը ներկայացնէ թէ
չափահաս . — Անոր մազերը ի՞նչ են , անոր աչքերը , անոր մօրձե-
քը . — Վահագնի մասին ի՞նչ կը պատմէին Հայաստանի մէջ . — Եր-
կինքի կովերը որո՞նք են . — Մըն է Յարդգողի ծանապարհը . — Վա-
հագնի համար մարդ է ըսողներ կային . — Որո՞ւ որդի է կ'ըսէին . —
Ինչո՞ւ աստուածացուցեր են զայն :

Բարսյական քելադուրիւն . — Զգացնել տւոց թէ մե՞ք
Հայերս մեր հայրերէն սիրուն յիշատակներ ունինք , զորս պէտք
է սորվինք ու պահենք : Անցողի կի կարելի է նաև զգացնել թէ
հին մարդիկ իրենց աստուածներուն կը վերագրէին մարդկային
տկարութիւններ կամ մարդկային նկարագիր :

ԺԸ. Դ Ա Ս

ՀԷՔԵԱԹ ՊԱՍՏՈՂ ԾԵՐՈՒՆԻՆ

— Սիրելի՛ Աշակերտներ ,

Գիտէք որ իմ ձեզի բոլոր պատմածները Գու-
սանին երգած ու պատմածներն են : Բայց այդ բո-
լոր պատմութիւնները , հէքեաթները կամ առաս-
պելները միայն Գուսանը չէ որ կը պատմէ : Մեր
պապերը բերնէ բերան կը սորվէին Գուսանին եր-
գերն ու պատմութիւնները և իրարու կը պատ-
մէին :

Հին ատեն , մեր հայրերուն ժամանակ դպրոց
չի կար և ուսուցիչը չէր պատմեր անոր , ինչպէս
հիմակ ես կը պատմեմ ձեզի : Բայց հին ժամանակ
պապերը (մեծ հայրիկ) կամ տատերը (մեծ մայ-
րիկ) իրենց բոլորտիքը կ'առնէին իրենց փոքրիկ-
ները ու անոնց կը պատմէին Գուսանին պատմած-
ները :

Կը յիշէ՞ք , ձեր տունները , ձմեռ ժամանակ երբ
հաւաքուիք , ձեր մեծ հայրիկը կամ մեծ մայրիկը
և կամ ուրիշ մէկը երբեմն աղուոր պատմութիւն-
ներ կ'ընեն , սիրուն հէքեաթներ կը պատմեն :

Այդպէս ալ հին ատեն մեր պապերուն տու-
նը , թոնիրին կամ վառարանին առջև , ծերունի
պապը կամ տատը իր շուրջը ժողված տունին

փոքրիկները կը պատմէր շատ մը հէքեաթներ, կը պատմէր Հայկին, Արամին ու Արային պատմութիւնը, Աժդահակի ու Տիգրանի կուրները, Վահագնի յարգ գողնալը և արևուն պէս ծնիլը, կը պատ-



Հեքեաթ պատմող ծերունին

մէր նաև ուրիշ պատմութիւններ, Սենեքերիմ թագաւորին և անոր երկու որդիներուն պատմութիւնը, Մհերին քաջութիւնները և ուրիշ շատ բաներ։ Մինչև հիմակ Հայաստանի մէջ ծերուկ պակիներ ու տատիկներ այդ պատմութիւնները կ'ընեն իրենց փոքրիկներուն։ Շատ անգամ թոնիրին քով կը հաւաքուին տունին փոքրիկները, անոնցմէ մէկը կը խնդրէ մեծ հայրիկէն կամ մեծ մայրիկէն որ իրենց պատմէ Սենեքերիմ թագաւորին,

Մհերին պատմութիւնը և կամ ուրիշ պատմութիւն մը։

Մեծ հայրիկը տեսնելով որ բոլոր փոքրիկները անհամբեր, բերանին բաց, գլուխնին երկարած կ'սպասեն, կ'սկսի իր սիրունիկ պատմութիւնը, հատիկ հատիկ կը պատմէ։

Տղաքները ուշադրութեամբ մտիկ կ'ընեն, անոր բերնէն ելած բոլոր բառերը միտքերնին կը պահեն. անոր պատմած քաջերուն նման իրենք ալ կը մտածեն քաջ և բարի ըլլալ։ Աղուոր աղուոր դասեր կը հանեն անոր պատմածներէն և միտք կը պահեն։

Հիմակ Հայաստանի մէջ քիչ կան Գուսաններ. բայց անոնց տեղը կը լրացնեն հէքեաթ պատմող ծերունիները։

Ես ալ այդ հէքեաթ պատմող ծերունիներուն պատմածներէն պիտի խօսիմ ձեզի. պիտի տեսնէք թէ ինչքան սիրուն և հետաքրքրական բաներ են։

Հարցարուս.— Գուսաններն զատ որո՞նք հէքեաթ կը պատմեն.— Չեզմէ որո՞նք հէքեաթ լսած են.— Էին ասան դպրոց կամք, տղաքը մէք պատմութիւն կը սորվէին.— Տղաները հէքեաթ կը սիրէն թէ ոչ.— Հայաստանի մէջ հիմակ շատ Գուսաններ կան.— Անոնց տեղ որո՞նք կը պատմեն այդ պատմութիւնները.— Գուսալ կը փափաքիք որ պատմեմ ձեզի անոնց պատմած հէքեաթներէն։

Աւարոյական քիլադուրիւս.— Տղաներուն զգացել ու անոնց եզրակացնել տալ թէ հայ պատմութեան գեղեցիկ աւանդութիւնները մեր պապերուն քով են. թէ հայ հէքեաթները ունին շատ սիրուն կողմեր, ուրեմն պէտք է սիրել զանոնք։

ԺԹ. Դ Ա Ս

ՍԵՆԵՔԵՐԻՄ ԹԱԳԱԻՈՐԸ

Ասորեստանի մէջ թագաւոր մը կար, անոր անունն էր Սենեքերիմ: Սենեքերիմ թագաւորն ունէր երկու որդի, Ադրամելէք և Սանասար:


Սենեքերիմ զօրաւոր մարդ մըն էր. կռապաշտ էր ու կը պաշտէր բազմաթիւ աստուածներ: Իր ժողովուրդին առջև մեծ հանդէսով կ'երևնար, կառքերու վրայ կը բազմէր. մինչև անգամ ինքզինքը իբրև աստուած պաշտել կու տար:

Օր մը բազմաթիւ զօրք հաւաքեց և Երուսաղէմի վրայ արշաւեց: Եօթը տարի քաղաքը պաշարեց, անոր չորս կողմը նստեցուց իր զինուորները, բայց չկրցաւ քաղաքը գրաւել:

Քաղաքին մէջ սով ինկաւ. ուստի անոնց թագաւորն ու ժողովուրդը ապաշխարեցին և աղօթեցին Աստուծոյ: Աստուած լսեց անոնց խնդիրքը և հրեշտակներ զրկեց ու անոնց միջոցաւ համաճարակ հիւանդութիւնով ջնջեց Սենեքերիմի զինուորները:

Սենեքերիմ ուղտը նստաւ ու փախաւ դէպի իր քաղաքը: Ճամբան խօսքը իր կուռքին ուղղելով ըսաւ.

— Ո՛վ մեծ կուռք, գիտեմ որ ինձի դէմ



Երուսաղիմ

բարկացած ես, անոր համար իմ զինուորներս վրճացուցիր: Կը խնդրեմ, բարեկամացի՛ր ինձի. կ'ուխտեմ քեզի զոհ մատուցանել իմ Ադրամելէք որդիին:

Կէս գիշերին Ադրամելէքի և Սանասարի մայրը երազ մը տեսաւ և իմացաւ որ Սենեքերիմ ուխտ ըրած է իր տղան զոհելու: Արթնցաւ և իր տղաներուն ըսաւ.

— Այս գիշեր երազ տեսայ և իմացայ որ ձեր հայրը ձեզ մատաղ պիտի ընէ կուռքերուն: Դուք ձեր գլխուն ճարը նայեցէք:

Անոնց դրամ, ձի և ուտելիք տալով ճամբու դրաւ:

Երկու եղբայրները ճամբայ ելան և փախան իրենց երկրէն: Անոնց գլխուն շատ բաներ պատա-

հեցան: Եւ զանոնք պիտի պատմեմ ձեզի յաջորդանգամ:

Հարցաւոց.— Ո՞վ է Սենեքերիմ թագաւորը.— Քանի՞ որդի ունէր.— Կուսպա՞շտ էր թէ աստուածապաշտ.— Երուսաղէմը ի՞նչ Երաւ.— Ե՞րբ ապաշխարեցին Երուսաղէմցիները.— Աստուած ի՞նչ Երաւ.— Սենեքերիմ ի՞նչ ուխտ ըրաւ.— Տղաքները ի՞նչպէս աղատուեցան ու փախան:

Ռարոյսկան քելագրութիւն.— Կարելի է շեշտել այն պաթազան որ հիները իրենց զաւակները խորեւ ստացուածք կը նկատէին և հետեւաբար կրնային զոհել. բայց հիմակ մաքդիկ իրենց զաւակները չեն զոհեր: Կարելի է շեշտել նաև լօք որդեսիրութիւնը:

Ի. Դ Ա Ս

ԱՂՐԱՄԵԼԷՔ ԵՒ ՍԱՆԱՍԱՐ

Աղրամելէք և Սանասար փախան իրենց հօրը քաղաքէն և նախ գացին Երուսաղէմ: Այնտեղի թագաւորը երբոր իմացաւ թէ անոնք Սենեքերիմ թագաւորին տղաքն են, վախցաւ և չընդունեց զանոնք իր քաղաքին մէջ: Ըսաւ.

— Մենք նոր ազատուեցանք Սենեքերիմի ձեռքէն, եթէ այս տղաքը մեր մօտ պահենք, Սենեքերիմ նորէն մեր վրայ կուգայ և մեր քաղաքը կը պաշարէ:

Երկու եղբայրները տրտմելով ետ դարձան և քալեցին երկար. հասան Մուշի Մուշեղ թագաւորին: Ան ալ Երուսաղէմի թագաւորին պէս չընդունեց զանոնք:

Այն ատեն բոլորովին տրտում տխուր շարունակեցին իրենց ճամբան: Երկար քալեցին. ճամբան հանդիպեցան առուակի մը որ բարձր լեռնէն կուգար: Առուակին ջուրը այնչափ ուժով կուգար որ մեծ գետին ջուրը կը կտրէր մինչեւ մէջտեղերը և յետոյ կը խառնուէր գետին հետ:

Եղբայրները զարմացան առուի ուժին վրայ: Սանասարն ըսաւ Աղրամելէքին.

— Ո՞վ որ աղ ջուրին ակը գտնէ և անկէ խմէ զօրաւոր կ'ըլլայ: Ուստի որոշեցին անոր ակը գտնել ու ակին մօտ բերդի մը հիմը դնել:

Գացին գտան առուակին ակը: Հոն իրենց բերդին հիմը դրին: Ապա գացին Ախլաթի Մելքոն թագաւորին և խնդրեցին որ զիրենք ընդունի: Մելքոն թագաւորը սիրով ընդունեց զանոնք: Տարի մը կերակրեց: Բայց տարի մը ետքը անոր վէճիրը (թագաւորին երկրորդը) ըսաւ.

— Թագաւոր, այս տղաքը պարապ տեղը հաց կ'ուտեն. պէտք է [փորձել և գիտնալ թէ ի՞նչ կրնան ընել: Անոնք ալ պատասխանեցին.

— Մենք լաւ կուուող ենք: Այն ժամանակ թագաւորը հաւաքեց իր քաջերը, որպէս զի անոնց հետ մրցին: Աղրամելէք և Սանասար անոնց հետ կուուեցան և յաղթեցին, մէկ քանիներն ալ սպաննեցին: Թագաւորը վախցաւ և ըսաւ.

— Ես կ'ուզեմ որ դուք հող ստանաք, եթէ թաք ձեզի տուն տեղ շինէք ու հեռանաք պա-

լատէն : եղբայրները խնդրեցին որ իրենց հիմը դրած բերդին տեղը իրենց տրուի և անոր բոլորտիքը բնակեցնելու համար ալ 40—50 տնուոր բնակիչ, Թագաւորը կատարեց անոնց խնդիրքը և անոնք ուրախութեամբ գացին :

Հարցաւրան.—Ադրամելէք և Սանասար նախ ո՛ւր գացին.— Ինչո՞ւ չընդունուեցան.—Յետոյ ո՛ւր գացին.— Ճամբան ինչի՞ հանդիպեցան.— Ինչ շինեցին աղբիւրի ակին քով.— ՅՈ՞ւր գացին.— Մելքոն Թագաւորը ինչո՞ւ հեռացուց իր քովէն :

Բարոյական քելադրութիւն.—Շեշտել վէզիտին խելացուֆիւնը : Աշխարհի վրայ աշխատութիւնն անհրաժեշտ է վայելելու համար, նաեւ որ կ'ուզեն առանց աշխատելու ապրիլ, բայց ասոնք անիրաւութիւն կ'ընեն, ուրիշներուն աշխատանքի պտուղը կը վայելեն՝ անիրաւաբար :

ԻԱ. ԴԱՍ


ՍԱՍՈՒՆ ԲԵՐԴԸ

Ադրամելէք և Սանասար Մելքոն Թագաւորէն հրաման առնելէն ետք գացին իրենց բերդին տեղը : Սանասարն ըսաւ Ադրամելէքին .

—Առաջ այս բերդը շինենք թէ այդ խեղճերուն տունները :

—Առաջ ատոնց տունները շինենք, պատասխանեց Ադրամելէք . վերջէն կը շինենք մեր բերդը, որովհետեւ այդ խեղճները չեն դիմանար արևին ու

ցուրտին : Եւ սկսան բնակիչներուն տունները շինել : Այս սկսան լրացնել իրենց բերդը, քարէ



Ախլար

սան, քարէ սիւն իրարու վրայ դրին ու բերդը աւարտեցին : Սանասար անկէ ետք իր եղբայրը Ադրամելէքը զրկեց Մելքոն Թագաւորին : Ան ըսաւ .

—Մենք քու զաւակներդ ենք և մեր բերդը շինեցինք, եկեր ենք քու մօտ և կը խնդրենք որ դաս ու մեր բերդին անուն դնես : Կը խնդրենք նաև որ աղջիկդ իբրև կին տաս եղբօրս Սանասարին :

Ախլարի Թագաւորը մեծ պատիւով ընդունեց : Իր աղջիկը տուաւ և ինքն ալ շատ մարդերով բերդը տեսնելու գնաց : Երբ բերդին առջևը հասան . Ադրամելէք ըսաւ .

—Մեղքո՞ն թագաւոր. մեր բերդին անունը դիր և ապա մտիր ներս : Թագաւորը պատասխանեց .

—Ձեր բերդին անունը — Սանի վրայ սին, Սանսիւն կամ Սասուն : Ու բերդին անունը մնաց Սասուն :

Հարցարան. — Ինչ՞ն աւաջ գիւղացիներուն տուները շինեցին. — Աղբամեղք ի՞նչ ըսաւ Մեղքոն թագաւորին. — Բերդին ի՞նչ անուն դրաւ թագաւորը :

Թարոյսկան քիւղորութիւն. — Վեր առնել հարկ է աշխատար ու թշուառ գիւղացիին հանդէպ Աղբամեղքի բարեացաւ կամ զգացումները. Ատիկա շնորհ մը չէր, այլ այն խեղճերուն իբրաւունքը :

Ի Բ. Դ Ա Ս

ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՍՊԱՆՍԻԹԻՆԸ

Աղբամեղք իր եղբորը պսակուելէն ետք ա՛մրս մը ամէն գիշեր երազ կը տեսնէր : Երազին մէջ իր հօրը Մեծ կուռքը այծի գլուխով և մարդու կերպարանքով կուգար կը կենար իր գլուխին վերև ու կը չարչարէր զինքը թոյլ չտալով մինչև լոյս որ քնանայ :

Խեղճը անբուն մնալէն հիւանդացաւ . և երբ իր եղբայրը պատճառը հարցուց .

—Մեր հայրիկին Մեծ կուռքը չթողուր ո՞ր

քնանամ : Ես պիտի երթամ հօրս մօտ. կամ հայրս զիս մատաղ պէտք է ընէ Մեծ կուռքին և կամ ես՝ հայրս պիտի մատաղ ընեմ :

Աղբամեղք մեկնեցաւ իր հօրը քաղաքը : Գնաց հօրը ներկայացաւ : Երբ Սենեքերիմ տեսաւ իր որդին շատ ուրախ եղաւ : Աղբամեղք ըսաւ իր հօրը .

—Հայրիկ, դուն ուխտ ըրեր ես զիս մատաղ ընել Մեծ կուռքին : Անիկա ինձի հանգիստ չտուաւ, ատոր համար եկայ :

Սենեքերիմ իր զաւակը տարաւ Մեծ կուռքին տաճարը և հրամայեց որ նախ երկրպագութիւն ընէ աստուածին, յետոյ զոհուելու համար : Աղբամեղք ըսաւ .

—Հայրիկ, չեմ գիտեր թէ ի՞նչպէս երկրպագութիւն կ'ընեն. կը խնդրեմ որ ինձի սորվեցնես :



ՍԵՆԵՔԵՐԻՄ ԲԱԳԱՍՈՐ

Սենեքերիմ այն ատեն սկսաւ սորվեցնել երկրպագելուն ձևը . խոնարհեցաւ Մեծ կուռքին առջև : Այդ ժամանակ Աղբամեղք մէկ հարուածով կտրեց իր հօրը գլուխը, շարդեց փշրեց կուռքերը և սուրը ձեռքը դուրս թռաւ տաճարէն :

Ամբողջ քաղաքը սոսկաց և հնազանդեցաւ ի-

րեն : Աղբամեյք Սենեքերիմի գահը բարձրացաւ
և եղաւ Ասորեստանի թագաւոր :

Հարցուման. — Աղբամեյք ինչո՞ւ նիհարչաւ .— Գնա՞ց հօրը
մօտ .— Ի՞նչ ըսաւ հօրը .— Հայրը ի՞նչ հրամայեց .— Աղբամեյք ի՞նչ
հնաքօր գիտեց իր հայրը սպաննելու համար :

Բարոյական քիլադուրիւն. — Կարելի է շեշտել Հայրա-
սպանութեան անարդարութիւնը : Բայց Աղբամեյքի տրարժը անով
կրնայ արդարանալ որ իր հայրը որդեսպան ըլլալ որոշած էր :

ԻԳ. ԴԱՍ

ԱՌԻԻԾԱԶԵԻ ՄՂԵՐ

Սասուն մնացած Սանասար ունեցաւ որդի մը,
որուն անունը դրին ՄՂԵՐ : Մհեր օրէ օր կը մեծ-
նար : Երբ տասնեւհինգ տարեկան եղաւ, արդէն
մեծ մարդու կը նմանէր և շատ ոյժ ունէր : Ունէր
ձի մը և աղեղ մը ու որսի կ'երթար :

Սասունը լեռնոտ երկիր մըն է : Հոն շատ ցո-
րեն չի բուսնիր, դուրսէն կը բերեն էշերով, շո-
րիներով : Օր մը սարսափելի առիւծ մը Սասունի
ճամբան բռներ էր և բոլոր անցնող դարձողները
կը բզբտէր : Ճամբաները գոցուեցան, մարդիկ
իրենց վախէն դուրս չէին կրնար ելլել, չէին կըր-
նար ցորեն բերել : Սաստիկ սով մը ինկաւ երկիրը :



Մհեր առիւծին բերանը կը պատէ

Մհեր առտու մը իր հօրը քով երթալով
ըսաւ .

— Հայրիկ, ինչո՞ւ կը խորհիս, ես պիտի եր-
թամ և այդ առիւծը սպաննեմ :

— Տղաս, ըսաւ հայրը, դուն պղտիկ ես, բան մը չես կրնար ընել. սուրը չի կտրեր այդ առիւծին միտը, նետը չի ծակեր անոր կաշին, անիկա քեզ ողջ ողջ կը լափէ :

— Ձէ, հայրիկ, ես կ'երթամ, ես չեմ վախնար. կամ կը մեռնիմ և կամ կ'ազատեմ Սասունը : Այդպէս ըսաւ ու ճամբայ ելաւ :

Գնաց գնաց Մհեր և հեռուէն տեսաւ առիւծը որ բերանը բացած սարէն դէպի վար իր վրայ կը վազէր : Նետը քաշեց ու նետեց, բայց առիւծը չի փնասուեցաւ : Աւելի կատղած ու փըրփըրած յարձակեցաւ Մհերի վրայ :

Մհեր միս մինակը քաջաբար նետուեցաւ առիւծին դէմ, և ոտքը դնելով անոր վրայ, բերանէն բռնեց և պատռեց :

Ժողովուրդը շատ ուրախացաւ և փառաւոր կերպով Մհերը բերդ տարին : Այն օրէն ի վեր Մհերը կոչուեցաւ Առիւծաձեռ Մհեր :

Հարցում. — Մհեր որով որդին էր. — Առիւծը մէկ բռնած էր. — Ինչո՞ւ Սասունի մէջ սով ինչաւ. — Մհեր ինչ ըսաւ իր հօրը. — Ինչո՞ւ առիւծը սպաննեց. — Ինչ կոչուեցաւ :

Բարոյական քելադրութիւն. — Շեշտել Մհերի քաջութիւնը, ժողովրդասիրութիւնը և անձնուիրութիւնը :

Ի Դ. Դ Ա Ս

Ս Ա Ս Ո Ւ Ե Յ Ի Դ Ա Ի Ի Թ

Երբոր Սանասար մեռաւ, Առիւծաձեւ Մհեր անոր տեղ անցնելով սկսաւ կառավարել իր երկիրը : Մհեր ամուսնացաւ և երեք որդի ունեցաւ, որոնց ամէնէն փոքրիկին անունն էր Դաւիթ :

Դաւիթ հովիւ էր : Ինքը թէև եօթը ութը տարեկան մանուկ մըն էր, բայց մեծ մարդու կը նմանէր և հարիւր հսկայի ոյժ ունէր :


Հովիւ եղած ատեն ծանօթացաւ և եղբոր պէս բարեկամ եղաւ ուրիշ հովիւի մը հետ ու միշտ անոր հետ մէկտեղ կ'արածէին իրենց հօտերը :

Օր մը այդ հովիւը յայտնեց թէ իրենց գիւղը հերիսայ եփած են և յանձնարարեց որ երթայ ուտէ և քիչ մըն ալ իրեն բերէ :

— Շուտով քու քով գալու համար չկրցայ հերիսայէն ուտել և անօթի ելայ եկայ, ըսաւ :

— Ես հիմայ կ'երթամ կը բերեմ, ըսաւ Դաւիթ և գնաց եկեղեցիին բակը :

Տեսաւ որ հերիսան եփած տեղէն վար առեր են և քահանաները եկած են կ'օրհնեն : Գնաց կաթսան վերցուց, կռնակն առաւ և սկսաւ հեռանալ : Քահանաներն ու մարդերը զարմացան : Երբ մարդ մը բարկացաւ, քահանաներէն մէկը ըսաւ :



Դաւիթ հերիսայի կաքսան կր անի

— Աստու սիրուն, ձայն մի հաներ. ադ Սասունի քաղերէն է, կը դառնայ մեզ ալ շարդու փշուր կ'ընէ:

Երբ Դաւիթ իր ընկերոջ քովը եկաւ, տեսաւ

որ ան նստեր կուլայ: Պատճառը հարցուց անոր: Այն ժամանակ տղան պատասխանեց Դաւիթին.

— Գառասուն վայրենի լեռան մարդեր եկան և իմ հորթերը տարին:

— Իուն անհոգ եղիր, ըսաւ Դաւիթ, ես հիմա կ'երթամ և հորթերը կը բերեմ:

Գնաց և լեռան մարդերուն բնակարանը գլտաւ: Մեծ քարայր մըն էր, Գառասունն ալ սպաննեց: Ներս մտաւ, տեսաւ որ 40 կանթէ (գուլք) կաթսայ մը կայ, 40 հորթերը մէջը կ'եփին: Կաթսան պարպեց, հորթերուն կաշիները մէջը լեցուց և առաւ իր ընկերոջ քով եկաւ:

Անոր հետ գիւղ գացին: Դաւիթ կանչեց կովատէրերը և ըսաւ.

— Ձեր կովարածը յանցանք չունի, եթէ իմ եղբորը չարիք մը ընէք, դուք գիտէք: Ադ պղինձը ծախեցէք. թող ձեր հորթերուն տեղն ըլլայ:

Յետոյ Դաւիթ նորէն այն քարայրը գնաց: Հոն ձի մը գտաւ. ձեռքը անոր մէջքին վրայ դրաւ, տեսաւ որ ձիին մէջքը չի ծռիր: Առաւ զայն և իրեն հեծնելիքը դարձուց: Այլևս սկսաւ որսորդութիւն ընել:

Հարցարան. — Մհերի փոքր որդին ինչ կը կոչուէր. — Դաւիթ ս'ըջափ ոյժ ունէր. — Ո՞վ էր Դաւիթին մտերիմ բարեկամը. — Հեթիսային կաթսան ինչ ըրաւ Դաւիթ. — 40 վայրենիները ինչ ըրաւ. — Քարայրին մէջ ինչ գտաւ:

Բարոյակամ քննադատութիւն. — Յոյց տալ Դաւիթի անձնուէր բարեկամութիւնը, քաջութիւնը:

ԻՆՏ. ԴԱՍ

ԴԱԻԻԹ ԵՒ ՄՍՐԱՄԵԼԻՔ

Սիրելի Աշակերտներ,
 Կը յիշէ՞ք. Ադրամելէքը իրեն հայրը սպաննեց
 և անոր տեղ թագաւոր եղաւ։ Անոր վրայ ա՛լ
 չխօսեցանք։ Հիմա պիտի պատմեմ։

Ադրամելէք բաւական շատ տարիներ թագա-
 ւոր եղաւ։ Իր երկիրը կառավարեց։

Օր մը Մսրամելիք անունով մէկը գնաց և Ադ-
 րամելէքը սպաննեց։ Անոր տեղը թաղաւոր եղաւ
 և նստաւ անոր գեղեցիկ պալատին մէջ, որ նին-
 ուէ կը գտնուէր։

Մարդ չբարկացաւ Ադրամելէքի մահուան վը-
 րայ, որովհետև Ադրամելէք հայրը սպաննած էր,
 անիկա հայրասպան մըն էր։

Մսրամելիք շատ քաջ և հսկայ մարդ մըն էր։
 Ան օր մը գնաց գրաւեց Սասունի մէկ մասը։ Երբ
 որ գրաւեց, Դաւիթ դեռ շատ փոքրիկ մանուկ էր։

Դաւիթ մեծցաւ, իր ձիովը անգամ մը որսի
 ելած էր։ Թռչուններուն ետեւէն ինկաւ և իր ոտ-
 քերուն տակ սկսաւ կոխկռտել պառաւ կնոջ մը
 արտը։

Պառաւը երբ տեսաւ, գոչեց։

— Դրողս տանի քեզ, Դաւիթ, ինչո՞ւ արտս փը-

ճացուցիր, եթէ քաջ ես ինչո՞ւ չես երթար Սա-
 սունի երկիրը ետ չես առներ։

Դաւիթ բան մը չէր գիտեր։ Գնաց տուն և
 հոն հարցուց։ Հասկցաւ որ Մսրամելիքը գրաւած
 է այդ երկիրը։ Դաւիթ ձին հեծաւ, իրեն հետ
 մէկ քանի քաջեր ալ առաւ ու գնաց գրաւուած
 երկիրը, Մսրամելիքին մարդերը սպաննեց, Անոնցմէ
 մէկ երկու հոգի միայն փախան և Մսրամելիքի
 գացին պատմեցին։

Մսրամելիք բարկացաւ։ Շատ զօրքեր հաւա-
 քեց և անձամբ Դաւիթի վրայ արշաւեց։

Դաւիթ իմացաւ։ Ձին հեծաւ, վաղեց մտաւ
 զօրքերուն մէջ և սկսաւ կոտորել։

Բայց ծերունի մը իր առջեւը ելաւ, գնաց
 անոր մօտ և ըսաւ։

— Ինչո՞ւ կը ջարդես այդ խեղճերը։ Անոնց
 թագաւորը բռնի հաւաքած ու բերած է զիրենք։
 Ինչո՞ւ կը քաջես կայծակի թուրդ, կ'սպաննես
 ասոնք. եթէ ըսելիք մը ունիս, գնա իրեն՝ թա-
 գաւորին հետ խօսէ։

Դաւիթ գնաց Մսրամելիքի քով. ուղեց անոր
 հետ մինակ կռուիլ։ Երբ Դաւիթ Մսրամելիքի վը-
 րանին մօտ գնաց Մսրամելիք կը քնանար։ Անոր
 բերանէն գոլորշիները ծուխի պէս կը բարձրանա-
 յին դէպի վեր։

Շամփուրներ բերին, տարցուցին և ոտքերուն

դրին որ արթննայ : Մտրամելիք մէկ կողմէն միւսը
դարձաւ և ինքնիրեն ըսաւ .

— Է՛, այստեղի լուերը ո՛րքան խիտտ կը
խածնեն :

Վերջապէս արթնցաւ , ընդունեց Դաւիթը :
Երկուքը մէկ որոշեցին առանձին պատերազմի .
ո՛վ որ յաղթէր յաղթած պիտի ըլլար և զինուոր-
ներուն պէտք չպիտի ըլլար կուռիլ :

Կռիւր սկսաւ Մտրամելիքի հետ :

Մտրամելիք նետեց իր նիզակը , որ շատ ծանր
էր : Երեք անգամ փորձեց , բայց չկրցաւ Դաւի-
թին ֆլասել :

Կարգը եկաւ Դաւիթին : Դաւիթ թոյլ տուաւ
որ Մտրամելիքը ծածկուի թաղիքներու և կարպետ-
ներու տակ :

Դաւիթ զարկաւ իր կայծակի թուրով , կրտ-
րեց կարպետները և Մտրամելիքն ալ երկու կտոր
ըրաւ :

Այնուհետև Դաւիթ ետ առաւ Սասունի եր-
կիրը և ուրիշ երկիրներ : Եւ ինքը եղաւ թագաւոր :

Հարցաւոյն . — Ադրամելէք ո՛ւրկէ սպաննուեցաւ . — Ին-
չո՛ւ մարդիկ չցաւեցան Ադրամելէքի մահուան վրայ . — Մտրամե-
լիք ի՞նչ գրաւեց . — Դաւիթ ո՛ւրկէ իմացաւ . — Ի՞նչ ըրաւ . —
Մտրամելիք որո՞ւ վրայ քալեց . — Երբունին ի՞նչ ըսաւ Դաւիթի . —
Մտրամելիքը ի՞նչպէս մարդ էր . — Կռիւին մէջ ո՛վ յաղթեց :

Բարոյսկան քիլադուրիւն . — Սափոջը ջուրի ճամբան
կը կտորի : Կ'ըսէ առածը . Ադրամելէք հայրասպան եղաւ , ինքն ալ

սպաննուեցաւ : Յուցնել Դաւիթի հայրենասիրութիւնը և անձնուր-
բութիւնը , երբ իր անձը վտանդի կը դնէ , միս մինակ կուռիլ յանձն
առնելով Մտրամելիքի նոյն հսկայի մը հետ :

ԻԶ. Դ Ա Ս

Պ Չ Տ Ի Կ Մ Հ Ե Ի

Դաւիթ որդի մը ունեցաւ : Անոր անունը
դրին Պզգիկ Մհեր : Երբ երախան ծնաւ , աջ ձեռքը
խուր , գոց էր : Հայրը սեղմեց և դժուարութեամբ
բացաւ : Ամէնքը սոսկումով տեսան որ անոր ավը
լեցուն է թանձր արիւնով :

Հայրը գուշակեց և ըսաւ .

— Այս տղան ինձմէ աւելի արիւն պիտի
թափէ :

Պզտիկ Մհերը սկսաւ մեծնալ : Թէև փոքրիկ
մանուկ էր , բայց չափահաս մարդու կը նմանէր :

Դաւիթ , օր մը լիճի մը մէջ լողցած ատենը ,
թշնամի թագաւորին ազդիկէն թունաւոր նետ մը
ընդունեց և մեռաւ :

Պզտիկ Մհեր անոր տեղ իշխան եղաւ : Առաւ
իր հօրը զէնքերը և ձին , և սկսաւ հօրը մահուան
վրէժը լուծելու համար երկիրներ ջարդել , թացը
չորը չնայել :

Ամէնէն առաջ յարձակեցաւ իր հօրը թշնա-
միին երկիրը և աւերեց զայն : Յետոյ սկսաւ աջ
ու ձախ չնայիլ : Ամէն կողմ սարսափ ձգեց :

Շարի անուն թագաւոր մը կար : Ան ըսաւ թէ Մհերէն չի վախնար : Շատ զօրք ժողովեց և Մհերի վրայ եկաւ :

Մհեր երբ իմացաւ , հեծաւ ձին և մտաւ Շարի թագաւորի դինուորներուն մէջ և սկսաւ ամէնքն ալ շարդել :

Շարի թագաւորը վախցաւ և խնդրեց որ Մհեր իրեն հետ բարեկամ ըլլայ : Մհեր ընդունեց և բարեկամ եղաւ : Շարի թագաւորը կեղծաւորութիւն կ'ընէր . հարցուց Մհերին .

— Բու ոյժը ինչի՞ մէջն է :

Մհեր վստահելով Շարի թագաւորին վրայ , թէ իր բարեկամն է , ըսաւ անոր .

— Իմ ոյժը թեւերուս մէջն է : Եթէ թեւերս ամուր կապէք , բան մը չեմ կրնար ընել :

Թեւերը կապեցին , յետոյ նետեցին Մհերը ջրհորի մը մէջ :


Շարի թագաւորը եօթն օր արձիճ հալեցնել տուաւ որ հորը լեցնէ և Մհերը սպաննէ :

Պառաւ կին մը , որ եօթն աղջիկ ունէր , օրը երկու անգամ հաց կը բերէր Մհերին : Օր մը պառաւը ըսաւ .

— Շարի թագաւորը արձիճ հալեցնել կուտայ որ քու վրայ լեցնէ [և քեզ սպաննէ : Եթէ իմ աղջիկներէս մէկը թագուհի ընել խոստանաս , ես քեզի կը սորվեցնեմ ազատուելու միջոցը :]

Մհեր ընդունեց : Այն ատեն պառաւը ըսաւ .

— Այդ ջրհորին կից ուրիշ ջրհոր մը կայ :



Մհերի փախալից դուռը

Պատը ծակէ և միւս կողմը անցիր : Այս ըսաւ և

պատը փորելու համար գործիքներ տուաւ : Չուանով մկրատ մըն ալ կախեց , որ Մհեր ձեռքի կապերը կտրէ : Մհեր պատը ծակեց և միւս կողմը անցաւ : Դիւրութեամբ դուրս ելաւ ջրհորէն և գնաց Շաբի թագաւորը սպաննեց : Պառաւ կնկան աղջիկը ջուհակի մը հետ ամուսնացուց և ջուհակն ալ թագաւոր կարգեց ու հեռացաւ :

Այլեւս Մհեր անյաղթելի էր : Այլ ու ձախ սկսաւ անխնայ կոտորել : Բայց քանի կը մեծնար , այնքան կը ժանրանար և հսկայ կը դառնար , և երբ ձիովը կը քալէր , ձիին ոտքերը գետնին մէջ կը խրէին :

Գետինը չէր կրնար բռնել Մհերը : Այդպէս որ մը , դժուարութեամբ քալելով , ինկաւ ագռաւի մը ետեւէն , որ միշտ կը փախչէր ու կը դիմէր դէպի քարայր մը :

Մհերը երբ ձիովը քարայրը մտաւ , Աստուած այլեւս թոյլ չտուաւ որ դուրս ելնէ : Քարայրը փակուեցաւ քարէ գուռով մը ու Մհերը մնաց հոն ու պիտի մնայ մինչև աշխարհի վերջը :

Հարցաւան. — Դաւիթի զակին անունը ինչ դիւն . — Ծնած ատենը ինչ պատահեցաւ . ? — Մհեր ինչ ըրաւ . — Շաբի թագաւորը ինչ ցուցաւ . — Ե՞րբ քարեկամացաւ Մհերի հետ . — Մհերին այժմ ո՞ւր էր . — Շաբի ինչ ըրաւ . — Ո՞վ պատահեց Մհերը . — Մհեր ինչպիսի մէկն էր . — Ո՞ւր մնաց :

Բարոյական քիւլագրութիւն . — Գովելի է Մհերի վրէժխնդրութիւնը , բայց անմեղներու սպանութիւնը յանձանք էր Մհերը պատուհաս մը եղաւ և հետեւաբար անհետացաւ :

ԻԷ. ԴԱՍ

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Կ

Սիրելի՛ մանուկներ ,

Այսօր ձեզի բոլորովին նոր պատմութիւն մը պիտի ընեմ : Գուսանի պատմածներէն պիտի առնեմ և պիտի պատմեմ :

Կար ժամանակ երբ Հայաստանի մէջ զօրաւոր իշխաններ չկային . Հայկի , Արամի և Տիգրանի պէս քաջեր չկային : Ամէն ժարդ կ'ուղէր ինքը իշխան ըլլալ և մեր երկիրը կառավարել : Ասոր համար օտար իշխան մը եկաւ և թագաւոր եղաւ Հայոց :


Այդ օտար իշխանն էր Վաղարշակ Պարթեւը : Պարթեւները կը բնակէին Պարսկաստանի լեռներուն վրայ : Անոնց մէկ իշխանը զօրացաւ և դըրաւեց մինչև Հայաստանի մօտերը գտնուած երկիրները : Այդ իշխանին յաջորդներէն մէկն էր Արշակ :

Արշակի եղբայրն էր Վաղարշակ :

Արշակ ուզեց իր եղբայրը Հայոց թագաւոր պսակել : Փառաւոր հանդէս մը ըրաւ և իր ձեռքով Վաղարշակի գլուխը դրաւ թագը , ըսելով .

— Դնա՛ տիրէ՛ երկիրներուն որքան որ քու խելքն ու քաջութիւնը կրնան տիրել , որովհետեւ քաջերու սահմանը իրենց գէնքն է :

Վաղարշակ, Հայոց թագաւոր պսակուել
ետը, բազմաթիւ զօրքով եկաւ Հայաստան, թա-
որ անոր դէմ դրաւ, որովհետեւ Հայերը և Պա-
թեւները լեզուով և կրօնքով իրարու նման էին
և Հայերը ոյժ չունէին:



Վաղարշակ թագաւոր կը պսակուի Արեակին

Վաղարշակ եկաւ նստաւ Արմաւիր քաղաքը
Հայոց բոլոր մեծ իշխաններուն պատիւներ տուաւ
Հայոց իշխանները կը կոչուէին նախարար:

Անիկա ուզեց Հայոց պատմութիւնը գիտնալ
ուստի փնտռել տուաւ ամէն կողմ:

Գտնելով Հայկի, Արամի և ուրիշ հայ թա-

ւորներու պատմութիւնը, քարէ արձանի մը
կողմէն փորագրել տուաւ որ ամէն մարդ կարգայ և
մանայ:

Ուրիշ աղուոր օրէնքներ ալ դրաւ և սիրելի
դաւ բոլոր Հայերուն:

Հարցաւան. — Պարթեւները ո՞ւր կը բնակէին. — Վաղար-
շակ որո՞ւ եղբայր էր. — Արշակ ի՞նչ ըրաւ իր եղբայրը. — Հայերը
ի՞նչ դէմ չէին Վաղարշակին. — Վաղարշակ ի՞նչ գործեր ը-
րաւ. — Սիրելի եղա՞ւ Հայերուն:

Բաւոյական քիւղարութիւն. — Ի մէջ այլոց կարելի է
տեսնել մանուկներուն թէ իշխան մը կամ թագաւոր մը եթէ
նկարող է և բռնաւոր, չի սիրուիր ժողովուրդէն. բայց եթէ կա-
նող, օգտակար և ժողովուրդին պէտքերը խորհող մէկն ըլլայ ան,
եթէ իսկ օտար մ'ըլլայ կը սիրուի ժողովուրդէն: Բռնապետը հայ
ըլլայ կամ օտար, բռնապետ է: Վաղարշակ օտար մը, սիրուեցաւ
այերէն, որովհետեւ խելացի հայ իշխանի մը պէս վարուեցաւ:

ԻԸ. ԴԱՍ


ԱՐՇԱԿԱ.

Վաղարշակ ունէր որդի մը, որուն անունը
բաժ էր Արշակ:

Երբ Վաղարշակ մեռաւ, անոր տեղ թագաւոր
դաւ իր որդին Արշակ Ա.:

Արշակ թագաւոր ըլլալով հետեւեցաւ իր հօրը
ինչպէս. Իր հօրը պէս բարեկարգութիւններ ը-

րաւ : Աշխատեցաւ ինքզինքը սիրցնել Հայերու
 Արշակ շատ քաջ և զօրաւոր մէկն էր : Սքա
 չելի նշան առնել զիտէր : Երբ որսի երթալ
 ինքը ամէնէն շատ որսը կը զարնէր : Երբեմն կա



Արցախ սիւնը կը ծակէ Երզնկով

քով ալ որսորդութեան կ'երթար, երկու եր
 ձիերով կառքի մէջ նստած վայրի եզներ և ու
 կենդանիներ կ'որսար :

Արշակ պատերազմներ ըրաւ մէկ քանի թ
 նամիներու հետ : Սեւ ծովին եզերքը բնակ
 ժողովուրդի մը հետ կռուեցաւ և յաղթեց անոնց :

Սեւ ծովին եզերքը քարէ սիւն մը կանգն
 տուաւ, իր յաղթութեան իբրև նշան :

Արշակ երկար նիզակ մը ունէր, որուն ծայրը
 շատ սուր էր : Այդ նիզակը շինուած էր պողպա
 տէ (յէլիկ) : Շինուած ատենը, երբ հնոցին մէջ
 կարմրած էր պողպատը, օձի և ուրիշ սողուննե
 րու արիւնին մէջ մխրձած էին : Ատոր համար ոչ
 կը ծռէր և ոչ կը կոտորէր :

Այդ նիզակը առաւ Արշակ, երեքցուց ձեռ
 քովը և ուժով նետեց իր կանգնել տուած քարէ
 սիւնին :

Նիզակը սիւնը ծակեց և մէջը կեցաւ :

Այս արձանը երկար ժամանակ կը պաշտէին
 այդ տեղի բնակիչները, աստուածային գործ մը
 սեպելով զայն :

Հարցաւրան. — Վաղարշակի որդին անունը ի՞նչ էր. — Ար
 շակ ի՞նչպէս մէկն էր. — Ի՞նչ կ'ընէր. — Որո՞նց հետ պատերազ
 մեցաւ. — Սեւ ծովին եզերքը ի՞նչ կանգնեց. — Նիզակը ի՞նչ ըրաւ :

Բարոյակած բելադրուրիւն. — Կարելի է թելադրել
 տղաներուն շայն ծանօթութիւնը թէ հիները իրենց խելքէն միտքէն
 վեր եղած բաները աստուածային կամ աստուած համարելով
 պաշտած են : Բոլոր հին մարդերն ալ այդպէս եղած են : Մարդիկ
 այժմ աւելի գիտուն են :

ԻԹ. ԴԱՍ

ԱՐՏՈՇԷՍ ԱՇԽԱՐՀՈՎԱԼ

Պարթեւներու թագաւորները միշտ առաջին թագաւորներն էին. իսկ Հայոց թագաւորը՝ երկրորդ :

Վաղարշակի թոռ Արտաշէսը, որ հպարտ և պատերազմասէր մարդ մըն էր, ուզեց ոչ թէ երկրորդ ըլլալ, այլ առաջին :

Արտաշէս իր հօրը Արշակին պէս քաջ էր : Նա շատցուց իր զինուորները և կանոնաւորեց : Յետոյ իրաւունքը ձեռք ձգեց և եղաւ առաջին թագաւոր :

Արտաշէս ինքզինքը կը կոչէր թագաւորներու թագաւոր. Դրամ կտրել տուաւ և իր պատկերը վրան փորել տուաւ :

Նա փափաքեցաւ նոր նոր երկիրներ նուաճել. Անհամար զօրք ժողովեց և դիմեց դէպի Հայաստանի արեւմտեան կողմը :

Ամէն տեղ ուր կ'իջեւանէր կը պատուիրէր իր զինուորներուն որ մարդ-գլուխ մէյմէկ քար ձգեն. այդպէսով ահագին բլուր կը ձեւանար :

Երբ անոր զինուորները գետէ մը ջուր խմէին, գետին ջուրը կը նուազէր, ինչպէս ամառուան ամիսներուն մէջ կ'ըլլայ :

Կռիւի ժամանակ անոր զինուորներուն նետերը այնչափ շատ, բազմաթիւ կ'ըլլային որ արևը կը խաւարեցնէին :

Վերջապէս անոր զինուորները այնչափ շատ էին որ անկարելի էր զանոնք մէկ մէկ համբել, այլ խուճը խուճը իրար կը բերէին և չափերով կ'իմանային անոնց թիւը :

Ահա այսպիսի ահագին բազմութիւնով Արտաշէս անցաւ արեւմուտք և գրաւեց բազմաթիւ քաղաքներ ու գաւառներ :

Իր գրաւած տեղերէն բոլոր գանձերը Հայաստան կը ղրկէր : Ինչպէս նաև բոլոր պղնձաձոյլ, ոսկեղօծ ու արծաթէ կուռքերը կ'առնէր ու կը ղրկէր Հայոց աշխարհը :

Այդ կուռքերը դրուեցան Հայոց մայրաքաղաքին, Արմաւիրի մէջ :

Այսպէս նա հասաւ մինչեւ այն ծովին ափը, որուն միւս եզերքին վրայ Յունաստանը կը գրտնուէր :

Արտաշէս կը խորհէր տակաւին ուրիշ երկիրներ ալ գրաւել, բայց իր զինուորներուն մէջ խռովութիւն մը ինկաւ ու սկսան զիրար կոտորել :

Նա ստիպուեցաւ փախչիլ : Բայց ճամբան իր զինուորներէն սպաննուեցաւ, որովհետեւ զոլուած էին անոր հպարտութենէն :

Արտաշէս երբ կը մեռնէր, ըսաւ :

— Աւանդ փառացս անցաւորի, Այս խօսքը հին հայերէն է, կը նշանակէ. «մե՛ղք այս անցաւոր փառքին» :

Հարցարան. — Հայոց թագաւորը առաջին եր թէ երկրորդ. — Ո՞վ էր առաջինը. — Արտաշէս ո՞վ էր. — Ի՞նչ ըրաւ. — Իր զինուորները ո՞րչափ էին. — Զուր խմած ատեն ի՞նչ կ'ըլլար. — Նետ նետած ատեն. — Քար ձգած ատեն. — Ինչպէ՞ս կը համբէին. — Այդ զինուորներով ի՞նչ ըրաւ Արտաշէս. — Իր գրաւած երկիրներուն գանձերը ո՞ւր կը դրէր — Կուռքերը ո՞ւր դրաւ :

Բարոյական քննադատութիւն. — Հպարտութիւնը լաւ բան չէ. Մարդ եր ունեցածին վրայ իսկ պետք չէ պարծենայ, Ասէն հպարտութեան վախճանը անկեւմ եղած է :

Լ. ԴԱՍ

ԱԲԳԱՐ ԵՒ ՅԻՍՈՒԻՍ


Սիրելի՛ աշակերտներս,
Այսօր ձեզի պիտի պատմեմ շատ հետաքրքրական պատմութիւն մը. Մեր նախնիքները իրենց գիրքերուն մէջ գրած են զայն :

Եղեսիա աղուոր և հին բաղաբ մըն է :
Հիմա կը կոչուի Ուրֆա :

Ժամանակին Եղեսիայի մէջ թագաւոր մը կար, որուն անունն էր Արգար : Արգար Հայոց թագաւորներուն ազգականն էր :

Արգարի ժամանակ Երուսաղէմի մէջ կ'ապրէր և կը բարոզէր Յիսուս : Անիկա հրաշքներ ալ կ'ընէր :

Օր մը Արգարի մարդիկը երբ Երուսաղէմ կը մտնէին, տեսան Յիսուսը և շատ զարմացան թէ՛



Եղեսիա կամ Ուրֆա

անոր խօսքերուն և թէ՛ գործած հրաշքներուն վրայ : Իրենց աչքերուն չէին հաւատար :

Երբ որ անոնք Եղեսիա դարձան, իրենց տեսածը պատմեցին Արգարի : Արգար երբ լսեց շատ ուրախացաւ, որովհետեւ եօթը տարիէ ի վեր բորտութեան մը բռնուած էր ու չէր կրնար բը-

ժըշկուիլ: Բոլոր բժիշկներուն դեղերը անօգուտ անցած էին:

Անմիջապէս նամակ մը գրեց Յիսուսին հետեւեալ կերպով.

«Լսեցի քու և քու բժշկութիւններուդ վրայօք: Դուն առանց դեղի կը բժշկես եղեր, կոյրերուն աչքերը կը բանաս, կաղերը կը քալեցնես, բորոտները կը մաքրես, և բոլոր հիւանդութիւնները կը բուժես, մեռելներուն անգամ յարութիւն առնել կուտաս եղեր: Երբ որ այս բոլորը լսեցի, խորհեցայ սա երկուքէն մէկը. կամ դուն Աստուած ես, երկինքէն իջնելով այդ բաները կ'ընես, կամ թէ Աստուծոյ որդի ես. Արդ, անոր համար գրեցի և կ'աղաչեմ քեզի որ ինձի դաս և բժշկես իմ հիւանդութիւնս: Լսեցի նաև որ Հրեաները կ'ուզեն չարչարել զքեզ, ես փոքրիկ և գեղեցիկ քաղաք մը ունիմ, որ մեր երկուքին կը բաւէ»:

Արգարին պատգամաւորները երուսաղէմ գացին և անոր նամակը յանձնեցին Յիսուսի: Քրիստոս նամակը կարդաց, և պատասխան սա նամակը գրեց.

«Երանի անոր որ կը հաւատայ ինձի թէ և զիս տեսած չէ: Դուն գրեք ես որ քու քով գամ և քեզ բժշկեմ. ես պարտաւոր եմ կատարել իմ գործը. երբոր գործս լննցնեմ, պիտի համբառնամ զիս շրկողին քով: Երբ որ համբառնամ քեզի պի-

տի զրկեմ իմ աշակերտներէս մէկը, որ քու ցաւերդ բժշկէս»:

Հարցարան.— Ո՞վ էր Արգար. Ի՞նչ հիւանդութիւն ունէր.— Ի՞նչ իմացաւ.— Ի՞նչ գրեց Յիսուսի.— Յիսուս ի՞նչ պատասխանեց:

Բարոյակաօն րեյտդուրի Ե.— Կարելի է մէկէ աւելի նիւթ գտնել այս պատմութեան մէջ բարոյական թելադրութեան տեսակէտով. կարելի է վեր առնել Արգարի և իր պատգամաւորներուն հաւատքը դէպի Յիսուս, պարտականութեան կատարումը կամ նուիրումը Յիսուսի մօտ եւն.:

ԼԱ. Դ Ա Ս

Ա Բ Գ Ա Ր Ե Ի Թ Ա Դ Է Ո Ս

Յիսուսի նամակը բերողն էր Անան: Իր հետ բերաւ նաև Քրիստոսի դէմքին պատկերը, դաստառակի մը կամ կտաւի մը վրայ գծուած:

Կ'ըսեն թէ Արգարի պատգամաւորներէն մէկը նկարիչ էր: Երբ Յիսուս երուսաղէմի մէջ քարոզ կուտար, նկարիչը հեռուն նստած կ'աշխատէր նկարել: Բայց ինչ որ կ'ընէր չէր կրնար:

Յիսուս իմացաւ անոր ինչ ընելը: Քովը կանչեց զայն, առաւ անոր ձեռքի կտաւը և իր երեսին դպցուց. անմիջապէս երեսի պատկերը գըծուեցաւ կտաւին վրայ:

Ահա այդ պատկերն է որ բերած էր Անան:

Երբ որ Յիսուս շարձարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, յարութիւն առնելէ ետք երկինք



Աբգար եւ Յիսուսի պատկեր

համբարձաւ, իր աշակերտներէն մէկը՝ Թադէոս առաքեալը զրկեց Եդեսիա, որ Աբգարը բժշկէ և քրիստոնէութիւն քարոզէ:

Թադէոս եկաւ Եդեսիա և Հրեայի մը տունը իջաւ: Երբ Աբգար իմացաւ, մարդ զրկեց և կանչեց: Թադէոս առաքեալի ներս մտած ատենը

Աբգարի այնպէս երեւցաւ որ Թադէոսի դէմքը լուսաւորուած էր, ուստի իր աթոռէն ելաւ ու երկրպագութիւն ըրաւ:

Աբգար հարցուց .

— Արդեօք դ՞ո՞ւն ես Յիսուսի աշակերտը, զոր ինձ զրկել խոստացաւ: Կրնա՞ս բժշկել իմ ցաւը՝ Թադէոս պատասխանեց .

— Եթէ հաւատաս Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ որդիին, սրտիդ ուզածը պիտի կատարուի: Աբգար ըսաւ .

— Ես հաւատացի անոր և անոր հօրը . ատոր համար ուզեցի առնել իմ զինուորները և գալ շարդել Հրեաները որ խաչեցին զանի:

Ասկէ ետք Թադէոս բժշկեց Աբգարի հիւանդութիւնը և Քարողեց քրիստոնէութիւնը, մկրտեց Աբգարը և բոլոր պալատականները ու բոլոր քաղաքը:

Աբգար եղաւ առաջին քրիստոնեայ թագաւորը:

Հարցարան.—Յիսուսի նամակը բերողին անունը ի՞նչ էր. — Ո՞վ կ'ուզէր Յիսուսի պատկերը քաշել. — Յաջողեցա՞ւ. — Յիսուս ի՞նչ ըրաւ. — Համբարձումէն ետք ո՞վ զրկեց. — Թադէոս ի՞նչ ըսելով բժշկեց Աբգարը. — Աբգար ի՞նչ եղաւ:

Քարոյական քիւլդորութիւն. — Վեր առնել Աբգարի հաւատքն ու Քրիստոնէութեան համար իր ջանքը եւն. . .

ԼԲ. ԴԱՍ

ՍՐԳԱՐ ՆԱՄԱԿՆԵՐ ԿԸ ԳՐԷ

Սրգար երբոր հաւատաց Գրիստոսի, փափաքեցաւ որ ուրիշներն ալ իրեն պէս հաւատան անոր: Ան նամակներ գրեց մէկ քանի մեծ մարդերու:

Նամակ մը գրեց Հռոմի թագաւոր Տիրերիոսին, այսպէս.

«Իմ տէրոջ Տիրերիոսին՝ Հռովմայեցւոց Կայսրին՝ ողջոյն (բարև),

«Գիտեմ որ դուն քու թագաւորութեանդ մէջ կատարուած ամէն բան կը գիտնաս, բայց ես ալ իբրև քու մտերիմդ, կ'ուզեմ գրել, Հրեաները խաչեցին Գրիստոսը առանց յանցանք ունենալու: անոր ըրած մեծամեծ բարիքներուն փոխարէն: Ան բազմաթիւ հրաշքներ գործեց, մինչև անգամ մեռելները ողջնուց:

«Եւ գիտցիր որ այս զօրութիւնը մարդու զօրութիւն չէ, Այլ Աստուծոյ, Անոր խաչուած ատենը արեւը խաւարեցաւ և երկիրը շարժեցաւ:

«Ինքը երեք օրէն ետքը յարութիւն առաւ և երեւցաւ շատերուն: Եւ հիմակ ալ ամէն տեղ Անոր անունը կը քարոզուի իր աշակերտներուն կողմէ:

«Սրգ դուն գիտես հարկաւ թէ ինչ պէտք է ընել Հրեաներուն՝ իրենց ըրածին փոխարէն: Ան շուշտ բոլոր երկիրներուն կը գրես որ երկրպագեն Գրիստոսի իբրև ճշմարիտ Աստուած: Ողջ եղիր»:

Սրգար նամակ մըն ալ գրեց Պարսից թագաւորին, որուն անունն էր Արտաշէս:

«Իմ եղբորս Արտաշէսին՝ Պարսից թագաւորին՝ բարև:

«Գիտեմ որ մինչև հիմակ լսած ես Յիսուս Գրիստոս Աստուծոյ որդիին վրայ: Հրեաները խաչեցին զանիկա, յարութիւն առաւ և իր աշակերտները զրկեց ամէն կողմ որ քարոզեն:

«Անոր աշակերտներէն մէկը Սիմոն անունով եկած է քու երկիրդ: Սրգ փնտռել տուր և գտիր, ան կը բժշկէ ձեր մէջ եղած բոլոր հիւանդութիւնները և կը սորվեցնէ ամէն բան: Դուն պիտի հաւատաս անոր խօսքերուն: Ես կը փափաքեմ որ ինչպէս մարմինով իմ ազգականս ես, նոյնպէս հոգիով ալ իմ ազգականս ըլլաս»:

Այսպիսի նամակներ ուրիշ թագաւորներու ալ գրեց Սրգար և աշխատեցաւ որ բոլոր մարդիկ քրիստոնեայ ըլլան, հաւատան Գրիստոսի:

Հտուցարան. — Արգար սրբու նամակ գրեց. — Ինչ ըսաւ. — Ուսե՛ք սրբու գրեց. Յիսուսի սր աշակեցող գաղտնիք էր Պարսկաստան:

Ռատոյական Բիւադրոսիւն. — Կարելի է շեշտել որ չըմտարութիւնը պէտք չէ ետնկել, երբ մարդ ինք բան մը սորվի կամ գտնէ, պարտաւոր է ուրիշներուն հաղորդել, մարդկային զարթոտկանութիւնն է այս: Արգարի նախամշաւուկութիւնը մտանանդել:

ԼԳ. Դ Ա Ս

ԹԱԴԷՈՍ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ

Թադէոս առաքեալը Աբգարը և բոլոր Եդեսիացիները քրիստոնեայ դարձնելէն ետք, մտաւ Հայաստան :

Հայաստանի մէջ կ'իշխէր Սանատրուկ անուն հայ իշխանը :

Սանատրուկ լսելով Աբգարի հաւատալը, և տեսնելով որ Թադէոս հրաշքներ կը գործէ, հաւատաց : Անոր աղջիկը Սանդուխտն ալ հաւատաց և ամէնքն ալ մկրտուեցան :

Բայց քանի մը տարի ետքը Սանատրուկ ուրացաւ քրիստոնէութիւնը, որովհետև վախցաւ իր իշխաններէն, որոնք քրիստոնեայ չէին եղած :

Սանատրուկ տեսնելով որ իր Սանդուխտ աղջիկը չուրանար, բարկանալով հրամայեց քրիստոնեայ մնացողները սպաննել և Սանդուխտն ալ բանտարկել տուաւ :

Թագաւորին կողմէ զրկուեցաւ իշխան մը, որ Սանդուխտը համոզէ քրիստոնէութիւնը թողուլ : Բայց այդ իշխանն ալ իր յիսուն ընկերներով հաւատաց :

Այն ատեն Սանատրուկ զայրացաւ և հրաման

ըրաւ սրէ անցնել բոլոր հաւատացողները և Թադէոս առաքեալը :

Անոնք ամէնքը նահատակուեցան Արտազի դաշտին մէջ : Ս. Թադէոս հրաշքով ազատուեցաւ :

Թագաւորը հրաման րրաւ նաև որ իր աղջիկն ալ սպաննեն : Ս. Սանդուխտ նահատակուեցաւ կուրծքէն վիրաւորուելով :

Թադէոս երեք օր ետքը բռնուեցաւ : Նսխ գազաններու առջև նետեցին զայն, բայց գազանները մնաս մը չհասցուցին անոր :

Յետոյ հնոց մը վառեցին և մէջը նետեցին, սակայն Թադէոս ողջ մնաց : Այն ատեն շատերը հաւատացին :

Բայց Թագաւորը բարկանալով հրաման ըրաւ անմիջապէս սպաննել : Ս. Թադէոս նահատակուեցաւ սուրով :

Հարցարան — Ո՞վ էր Սանատրուկ. — Թադէոս ո՞ր դժաց. — Ո՞վ հաւատաց և քրիստոնեայ եղաւ. — Սանատրուկ ինչ՞ուր բացաւ. — Ի՞նչ հրամայեց. — Իշխանը ինչ՞ուր զրկուեցաւ բանտ, Սանդուխտին մօտ. — Ի՞նչ եղաւ ինքն ալ. — Սանդուխտն ի՞նչպէս նահատակուեցաւ. — Թադէոսը ո՞ր նետեցին. — Ի՞նչպէս մեռցուցին :

Բարոյական թելադրութիւն. — Կարելի է վեր առնել Սանդուխտի և Թադէոսի անձնուիրութիւնը եւն. :

ՀԴ. ԴԱՍ

ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

Թաղէոս առաքեալը Հայաստանի մէջ քարոզեց քրիստոնէութիւնը, Մատեր ընդունեցին նոր կրօնը: Բայց Արգարի մեռնելէն ետք սկսան նորէն իրենց հայրենի աստուածները պաշտել:

Այդ ժամանակները Հայաստանի մէջ թագաւորական գահը բարձրացաւ Արտաշէս Բ.:

Արտաշէս շատ խելացի, քաջ և շինարար թագաւոր մը եղաւ. իր անունով քաղաք մը շինեց և կոչեց Արտաշատ:

Թշնամիներուն ղդէմ Հայաստանը պաշտպանեց և ամէնուն դէմ յաղթող ելաւ, Երկիրը շինուց և խաղաղեցուց.

Արտաշատը շինուելու, աւարտելու վրայ էր, երբ Լայաստանի հիւսիսային կողմէն Ալանները յարձակեցան Հայոց վրայ. Ալաններուն միացած էին նաև ուրիշ ազգեր, ինչպէս Վրացիները և Կովկասի լեռնականները:

Արտաշէս երբ իմացաւ որ այդ տրչաւողները եկեք տարածուեր են հայ գիւղերուն և դաշտերուն մէջ, ամէն չարիք կը հասցնեն, կը թալլեն Հայաստանի սահմանազրուիները, անմիջապէս բազմաթիւ զօրք ժողովեց և անոնց վրայ քալեց:

Ալանները և Վրացիները յաղթուեցան Արտաշէսի զինուորներէն և Կուր գետին միւս կողմը փախան: Ալաններու թագաւորի տղան ալ գերի ինկաւ Արտաշէսին ձեռքը:

Ալաններու թագաւորը ստիպուեցաւ աղաչել, առաջարկեց Արտաշէսին որ խաղաղութիւն ըլլայ և ըսաւ.



Արտաշէս և Սաթենիկ

— Երգում ընելով մեր մէջ դաշինք հաստատենք որ ասկէ ետք Ալաններու կտրիճները երբեք չյարձակին Հայոց երկիրը, իրարու բարեկամներ ըլլանք և դու իմ որդին ազատ արձակէ:

Արտաշէս այնքան բարկացած էր որ չէր ուզեր ո՛չ մէկ պայմանով արձակել թագաւորին տղան և կ'սպառնար կա՛մ սպաննել զայն և կա՛մ իրեն գերի և ծառայ դարձնել:

Այն ժամանակ տղուն քոյրը Սաթենիկ մօտեցաւ գետի եզերքը, բարձր քարի մը վրայ կենալով, թարգմանի միջոցաւ գոչեց.

— Իեզիկ՝ կ'ըսեմ, ո՛վ քաջ Արտաշէս, որ յաղթեցիր Ալանաց քաջ ազգին. եկուր այդ պատանին ինձ, Ալաններու գեղաշէայ արքայադուստրին ընծայէ: Միթէ կը վայլէ՞ դիւցազներուն որ ուրիշ քաջի մը որդին մեռցնեն կամ գերի դարձնեն: Ատով յախտենական թշնամութիւն կը ձգես երկու քաջ ազգերու միջեւ:

Արտաշէս լսելով այս իմաստուն խօսքերը, գետին եզերքը եկաւ. տեսաւ Սաթենիկը և հիացաւ անոր գեղեցկութեան վրայ: Ուզեց ամուսնանալ անոր հետ: Աղատ արձակեց անոր եղբայրը և Սաթենիկի հօրմէն ուզեց իր աղջիկը՝ իբրեւ կին:

Ալաններու թագաւորը ընդունեց և Սաթենիկը մեծ հանդէսով Արտաշէսի բանակը տարին: Հարսնիքը շատ փառաւոր եղաւ: Հարսին վրայ մարգարիտներ կը նետէին, իսկ փեսային վրայ ոսկի անձրեւ կը թափէին. Սաթենիկը եղաւ Արտաշէսի ամէնէն սիրելի կինը:

Հարցաւորմ. — Ո՞վ էր Արտաշէս. — Ի՞նչ գործեր ըրաւ, ի՞նչ քննեց. — Ալանները Հայաստանի ո՞ր կողմը կը բնակէին. — Ի՞նչ ը-

բն. — Ո՞վ գերի ինկաւ. — Սաթենիկ ի՞նչ ըրաւ. — Արտաշէս Սաթենիկը իբրեւ ի՞նչ ըրաւ. — Հարսնիքին ի՞նչ կը նետէին:

Պատրոյական քելադուրիւն. — Սաթենիկի խելացութիւնը շեշտել, ազգեր՝ բարեկամ ըլլալով շատ բան կը շահին — խաղաղութիւն, բարգաւաճում — իսկ թշնամութեամբ՝ ոչինչ՝ վնասէն զատ:

Լ Ե. Դ Ա Ս

ԱՐՏԱՇԷՍԻ ՄԱՀԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ


Սաթենիկի և Արտաշէսի ամուսնանալէն ետք Ալանները և Հայերը բարեկամ եղան իրարու: Հայաստանը խաղաղեցաւ: Հայերը ամէնքն ալ սկսան իրենց գործերով զբաղիլ:

Ժողովուրդը շատ սիրեց Արտաշէսն ու անոր գեղեցիկ տիկինը՝ Սաթենիկը:

Արտաշէս բազմաթիւ որդիներ ունեցաւ Սաթենիկէն, որոնց ամէնէն մեծը Սրտաւազդ կը կոչուէր:

Արտաշէսը երկար տարիներ խաղաղ կերպով իր երկիրը կառավարելէ ետք, անգամ մը երբ գիւղ մը կը գտնուէր, ծանր կերպով հիւանդացաւ: Այդ գիւղը Հայաստանի մէկ ծայրը կը գտնուէր: Արտաշէս իր մայրաքաղաքէն, իր պալատներէն հեռու գտնուելուն համար կարօտով կը յիշէր իր որսերն ու թագաւորական տօնա-

խըմբութիւնները, իր քաղաքներէն արշալոյսին



Արսաեսի յուղարկաւորութիւնը

բարձրացող ծուխը, Նաւասարդի ուրախ առաւօտը, և կ'ըսէր.

(Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի,
եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազին եղանց եւ զվազին եղջերուաց,
Մեր փող հարուար եւ թմբկի հարկանէար,
Որպէս օրէն է թագաւորաց.)

Ո՞վ կուտայ ինձ որ տեսնեմ ծխանի ծուխը,
եւ Նաւասարդի առաւօտը,
եղնիկներու վազվզին ու եղջերուներու թռչտիւր,
Մենք փող կը հնչեցնէինք եւ թմբուկ կը զարնէինք,
ինչպէս թագաւորներու սովորութիւնն է.

Երբ Արտաշէս մեռաւ, ողբ ու կոծ բարձրացաւ: Բոլոր մարդիկ կուլային և մազերնին կը փետէին:

Տխուր և մեծ թափոր մը կազմուեցաւ: Դագաղը ոսկեղէն էր, մէջի բարձն ու անկողինը՝ բեհեզէ, հագած էր ոսկեթել հանդերձներ, զըլուխը թագ: Դագաղին քովէն կ'երթային իր որդիներն ու ազգականները, զինուորական պաշտօնեաներն ու նախարարները: Առջեւէն պղինձէ փողեր կը հնչեցնէին. իսկ ետեւէն կուգային սեւազգեստ կիներ, որոնք բարձր ձայնով, երբեմն միսակ, երբեմն խումբով ողբեր կ'երգէին և կը գովէին Արտաշէսի գործերը: Ետեւէն կուգային անհամար ժողովուրդ:

Այսպէս փառաւոր հանդէսով տարին ու գերեզման դրին:

Իր կիներն ու մտերիմները, ժողովուրդէն շատեր այնչափ կը սիրէին իրենց թագաւորը, որ երբ գերեզման կ'իջեցնէին դագաղը, իրենք ալ կամաւոր մահով վերջ դրին իրենց կեանքին ու միասին թաղուեցան:

Հարցաւոր.— Արտաշէսի օրով ժողովուրդն ինչպէս ապրեցաւ. — Արտաշէսի մեծ աղուն անսւրը ինչ էր. — Արտաշէս մեր հիւանդացաւ. — Ինչ ըսաւ հիւանդացած ամենը. — Թագաւոր ինչպէս կատարուեցաւ. — Դագաղին քովէն և առջեւէն որո՞նք կ'երթային, ետեւէն որո՞նք. — Թագաւոր ամեն ինչ պատահեցաւ:

Բարոյական քննադատութիւն. — Թելադրութեան դեղեցիկ նիւթ կարելի է դարձնել Արտաշէսի հպատակասիրութիւնը կամ այլասիրութիւնը, ժողովուրդին տիրասիրութիւնը և ինչ:

ԼԶ. Դ Ա Ս

Ա Ր Տ Ա Ի Ա Չ Ի

Արտաշէսի ուղին Արտաւազդէ երբ որ մեծ-
ցաւ եղաւ չար և հպարտ մէկը: Նա չէր ուզեր
որ իր միւս եղբայրները սիրելի ըլլան իրենց հօրը:
Շատ նախանձոտ էր:

Արտաւազդէ տեսաւ նաև որ իր հօրը մեռած
ժամանակ բոլոր ժողովուրդը արտում ու տխուր
է: Անոնք բնաւ չէին մխթարուեր Արտաւազդի
վրայ նայելով:

Նա շատ ցաւ զգաց և սկսաւ ինքնիրենը
մտածել:

Բայց երբ տեսաւ որ շատերը ինքզինքնին կը
ղոհէին Արտաշէսի գերեզմանին վրայ, բարկացաւ
և խօսքը իր հօրը ուղղելով գոչեց.

(Մինչ դուն գնացեր և զերկրս ամենայն ընդ քեզ տարաք, ես
աւերակացս, որպէս թագաւորեմ).

Ահա դուն գացելի ու ամբողջ երկիրը քեզ
հետ տարիր, էես [աւերակներուն վրայ ինչպէս
թագաւորեմ:

Այն ժամանակ, կ'ըսեն թէ, Արտաշէսի գե-
րեզմանէն ձայն մը ելաւ. որ անիծեց Արտաւազդը,
ըսելով.

Դու յորս հեծցիս
յԱզատ ի վեր ի Մասիս,
զՔեզ կայցին քաջք,
Տարցին յԱզատ ի վեր Մասիս,
Անդ կացցես եւ զոյս մի տեսցես:

— Երբ որսի ելնես Ազատ Մասիսի վրայ, քա-
ջերը (լեռներու ոգիները) բռնեն քեզ և տանին
վեր, Ազատ Մասիսի վրայ, այնտեղ մնաս և լոյս
չտեսնես:



Արտաւազդ անդունդի կը գլորի

իլյացնէ որ մը, երբ որսորդութեան ելած
էր, յանկարծ իր ձիով խորունկ անդունդ մը գլոր-
ուեցաւ և անհետացաւ:

Կ'ըսեն թէ քաջերն զայն շղթայի զարկած և

բանտարկած են մութ այրի մը մէջ: Արտաւազդի երկու հաւատարիմ շուները շարունակ կը կրծեն անոր շղթաները, որպէս զի մաշի և նա աղատուի: Ինքն ալ կ'աշխատի փրցնել իր կապանքները, որպէս զի դուրս ելնէ և աշխարհը տակն ու վրայ ընէ:

Բայց անոր շղթաները միշտ կը հաստնան երկաթագործներու մուրճի ձայնէն: Ատոր համար հայ երկաթագործները կիրակի օրերն ալ երեք չորս անգամ իրենց մուրճերը սալին վրայ կը ծեծեն, որ Արտաւազդի շղթաները զորանան:

Հարցումս. — Արտաւազդ ինչպէս մէկն էր և ինչ ըրաւ. — Հօրը մեռաւ ատեն ինչ ըսաւ. — Ինչ պատասխան առաւ. — Ինչ եղաւ ատիկա. — Ինչ կ'սեն մեր պապերը. — Դարբինները ինչ կ'ընեն կիթակի օրերը, ինչօ՛ւ:

Բարոյական րկադրութիւն. — Վեր առնելով Պառիկ Մհերի և Արտաւազդի աւանդակներուն նման կողմերը, կ'արժէ մանուկներուն ուշադրութիւնը հրաւիրել Աւտաւազդի նախանձառութեան ու չարութեան վրայ:

ԼԷ. Դ Ա Ս

ՏՐԴԱՏԻ ՔԱՉՈՒԹԻԻՆԸ

Հայոց նշանաւոր թագաւորներէն մէկն էր Տրդատ: Տղայութեան ժամանակ Սասունցի Դաւիթին և Մհերին նման քաջ էր:

Դեռ պզտիկ էր Տրդատ, բայց քաջ ձի հեծնել գիտէր: Ամէնէն անսանձ ձին անգամ կը հնազանդեցնէր: Լաւ զէնք կը գործածէր և աղէկ նշանառութիւն ունէր:

Մեր պատմիչները կ'ըսեն թէ՛ անգամ մը Տրդատ երկու վայրենի ցուլի հետ կռուելով, երբ սոսկալի կենդանիները իր վրայ յարձակեցան, ուժով բռնեց անոնց եղջիւրներէն ու այնպէս մը ցնցեց որ եղջիւրները տեղէն ելան:

Ուրիշ անգամ մըն ալ, կառք վազցնելու մրցումի միջոցին, Տրդատի հակառակորդը այնպէս ճարպիկ վարուեցաւ որ Տրդատ իր կառքէն վար ինկաւ, նա բարկացաւ և վազեց իր մրցորդի կառքին ետեւէն. վերջի անիւներէն բռնեց և կառքը կեցուց, Բոլոր ներկաները զարմացան և ծափահարեցին:

Տրդատ թագաւոր ըլլալէ առաջ Հռովմայեցւոց թագաւորին քով թիկնապահ (թագաւորի պահապան) էր: Նա շատ կը յարգէր իր մեծը:

Անգամ մը երբ Հռովմայեցիները պատերազմ կ'ընէին, սով եղաւ: Մինչեւ անգամ ձիերուն խոտերը պակսեցան: Այն ժամանակ Հռովմայեցի զինուորները սկսան իրենց մեծերը սպաննել: Թագաւորն ալ պիտի սպաննէին, բայց Տրդատ պաշտպանեց զայն:

Երբ պարիսպներով պատած քաղաքի մը առջեւ հասան, Տրդատ պարիսպներէն վեր ելաւ, ու

ետեւը գտնուած խոտի դէղերը պահպաններուն
և էջերուն հետ մէկտեղ սկսաւ դուրս նետել :
Ամէնքն ալ զարմացան :

Օր մըն ալ Հռովմայեցւոց թագաւորին տեղ
ինքը մինակը կուսեցաւ ուրիշ թագաւորի մը հետ
և զայն բռնելով բերաւ իր պետին առջև :

Այսպէս նշանաւոր էր Տրդատ իր քաճու-
թիւնով :

Հարցարան. — Ո՞վ էր Տրդատ. — Ի՞նչպէս մէկն էր. —
Վայրի ցուլերուն ի՞նչ ըրաւ. — Կառքով մրցած ատեն ի՞նչ եղաւ :
— Ի՞նչպէս խոտ ձարեց. — Ո՞վ պաշտպանեց և որո՞ւ տեղ կըռ-
ուեցաւ :

Ռարոյական բելլոգրօքիւն. — Տրդատի անձնուկրու-
թիւնը և տիրասիրութիւնը վաշձատրուեցաւ :

ԼԸ. Դ Ա Ս

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵՒ ՏՐԳԱՏ

Տրդատ իր անձնուկրութեան և հաւատար-
մութեան համար շատ սիրելի եղաւ Հռովմայեց-
ւոց թագաւորին, որ մեծ փառքով Հայաստան
դրկեց զայն :

Տրդատ նախ եկաւ Մաժակ կամ Կեսարիա :
Հոն մեծ պատիւներով ընդունեցին զինքը
նախարարներն ու ժողովուրդը : Կեսարիայէն մեծ
թափօրով և փառքով մտաւ Հայաստան :

Երբ որ Երիզա հասան, Տրդատ հրամայեց
որ մեծ պատիւներ տան և զոհեր մատուցանեն
Անահիտ աստուածուհիին :

Անահիտ աստուածուհին Հայերուն մեծ
աստուածներէն մէկն էր : Մեր պագերը կը




Անահիտ սիկիւնից գլուխը

հաւատային թէ՛ ան՝ մեծ տիկինն է, մեր ազ-
գին փառքն ու ապրեցնողն է : Ան բարերար է .
անով է որ Հայոց աշխարհքը կ'ապրի և կենդա-
նո թիւն ունի :

Տրդատի գրագիրն ու թիկնապահն էր Գրի-
գոր անունով մէկը : Երբ տրդատ հրամայեց Գրի-
գորին ալ որ ծաղկեպսակ մը տանի Անահիտ տի-
կինին տաճարը, Գրիգոր մտրժեց, ըսելով :

— Ես չեմ կրնար պաշտել այնպիսի աստու-
ուած մը որ ոսկիէ և թանկագին քարերէ շին-
ուած է. ես կը պաշտեմ ճշմարիտ Աստուածը,
որ երկինքն է, ես քրիստոնեայ եմ:



Խոր Վիրապի վանքը

Տրդատ շատ բարկացաւ որ Գրիգոր կ'անար-
դէ Հայոց մեծ աստուածուհին, և ըսաւ:

— Ի՞նչ կ'անարգես մեր մեծ աստուածու-
հին, որ մեր երկրին փառքն ու պարծանքն է:
Ուրիշ թագաւորներն անգամ կը պաշտեն զայն,
դո՞ւն չես ուզեր անոր երկրպագել:

Այս ըսելով հրամայեց որ չարչարեն զայն:
Ս. Գրիգոր իր կրած բոլոր չարչարանքներուն մէջ
հաստատուն մնաց իր հաւատքին վրայ և չուրա-
ցաւ իր կրօնքը:

Տրդատ երբ իմացաւ թէ իր հայրը սպաննող
նախարարին տղան է Ս. Գրիգորը, մահապարտ-
ներու բանտը՝ Արտաշատի Խոր Վիրապը նետել
տուաւ: Խոր Վիրապը ողջ չէին մնար, անօթի կը
մեռնէին:

Հիմակ Խոր Վիրապի այդ բանտին տեղը ե-
կեղեցի և վանք շինուած է:

Հարցումն.— Տրդատ ի՞նչու վարձատրուեցաւ.— Նախ քան
քաղաքը եկան.— Ետքն մ.թ.— Ի՞նչ հրաման ըրաւ.— Ս. Գրի-
գոր ինչո՞ւ մերժեց ծաղկեփունջ նուիրել.— Տրդատ ի՞նչ ըսաւ.—
Ս. Գրիգոր որ՞ն որդի էր.— Տրդատ երբ իմացաւ ո՞ւր նետել
տուաւ:

Բառոյական քեղադուրբիւն.— Յուցնել Ս. Գրիգորի Աս-
տուածապաշտութիւնը, անձնազոհութիւնը՝ գաղափարի համար և
կամքի ոյժը:

ԼԹ. ԴԱՍ

ՀՌԻՓՍԻՄԷ ԵՒ ԳԱՅԻԱՆԷ

Ս. Գրիգոր Խոր Վիրապին մէջ չմեռաւ, ու-
րովհետեւ կին մը ամէն օր գաղտնի հաց կը տանէր
կը ձգէր անոր: Ս. Գրիգոր հոն մնաց 14 տարի:

Երբ այդ տասն և չորս տարիները ըննցան, լուր ելաւ թէ քանի մը քրիստոնեայ կոյսեր եկեր են մայրաքաղաքին մօտերը:

Տրդատ երբոր իմացաւ անմիջապէս հրաման ըրաւ բռնել այդ կոյսերը և սպաննել՝ եթէ քրիստոնէութիւնը չուրանան:

Ս. Գրիգոր Խոր Վիրապը ձգուելէն ի վեր Տրդատ կը հալածէր Գրիստոնեաները, ատոր համար այդ տեսակ հրաման մը տուաւ:

Այդ քրիստոնեայ կոյսերը Աստուած պաշտելու համար իրարու քով եկած էին և կը ճգնէին այգիի մը մէջ, իրենց գլխաւորներն էին Ս. Գալիանէ և Ս. Հռիփսիմէ:

Այդ կոյսերէն մէկը գիտէր ապակիէ ուլունքներ շինել. անոր շինած ուլունքները կը ծախէին և ատով կը կերակրուէին:

Ս. Հռիփսիմէն ամէնէն գեղեցիկ աղջիկն էր անոնց մէջ:

Երբոր իմացուեցաւ անոնց կեցած տեղը, անմիջապէս պահապան զինուորներ զրկուեցան: Ս. Հռիփսիմէի գեղեցկութիւնը տեսնելով ամէն մարդ կը հիանար:

Տրդատ երբոր իմացաւ Հռիփսիմէի գեղեցկութիւնը, հրամայեց որ պատիւով իրեն քով բերեն: Ազնիւ, սիրուն և թանկագին զգեստներ տարին, որ Հռիփսիմէ զարդարուի և թագաւորին առջեւը ելնէ:

Շատ մը իշխաններ և նախարարներ գացին կոյսերուն կեցած տեղը, որպէս զի փառաւոր հանդէսով Ս. Հռիփսիմէն պալատ տանին. որովհետեւ Տրդատ ուզեց իրեն կին առնել զայն:

Բայց Ս. Հռիփսիմէ և իր ընկերները չուզեցին երթալ: Ս. Հռիփսիմէ ըսաւ.

— Հարստութիւնն ու մեծութիւնը չեն կրնար մեզի յաղթել, հալածանքը մեզի համար արժէք չունի: Մենք չենք փոխեր մեր անցաւոր կեանքը յաւիտենական կեանքին հետ: Ոչ, ոչ, մենք չենք գար:

Եւ սկսան ամէնքն ալ ողբալ, կոծել և աղաղակել:

Տրդատ իմանալով որ Ս. Հռիփսիմէն չուզեր պատիւով գալ, հրաման ըրաւ բռնի բերել զայն և իր սենեակը առաջնորդել: Այն ատեն սկսան քաշկոտելով քաղաք տանիլ:

Տարին ու թագաւորին սենեակը մտցուցին: Թագաւորը ներս մտաւ, որպէս զի համոզէ զայն:

Երբ թագաւորը Ս. Հռիփսիմէին գտնուած սենեակը կը մտնէր, թէ պալատին մէջ և թէ դուրսը՝ քաղաքին մէջ ամէն մարդ սկսաւ ուրախանալ և հարսնիքի հանդէսներ ընել:

Բայց Ս. Հռիփսիմէն ամուր մնաց իր հաւատքին վրայ: Կարեւորութիւն չտուաւ Տրդատի խոստումներուն և պատիւներուն: Մերժեց անոր առաջարկը և չուզեց անոր կինը ըլլալ: Աւելի լաւ

կը սեպէր մեռնիլ քան թէ կռապաշտ թագաւորի մը կինն ըլլալ :

Տրդատ տեսնելով որ անկարելի է համոզել, ոչ անուշ խօսքերով և ոչ սպառնալիքներ ընելով, հրաման ըրաւ որ Գայիանէն ներս տանին և ստիպեն զայն՝ համոզել Ս. Հռիփսիմէն :

Ս. Գայիանէն ներս մտնելով փոխանակ համոզելու որ Տրդատի առաջարկը ընդունի, ըսաւ .

— Քաջալերուէ՛, ամո՛ւր կեցիր, սիրելի աղջիկս, միաքդ բեր իմ տուած խրատներս, մի՛ մոռնար զանոնք :

Երբ իմացաւ Գայիանէի այդ կերպ խօսիլը, Տրդատ շատ բարկացաւ . հրաման ըրաւ չարչարել զայն :

Հրամանը կատարուեցաւ :

Ս. Հռիփսիմէն քաջալերուեցաւ և զօրացաւ : Փախաւ պալատէն և Ս. Գայիանէի հետ գնաց իրենց միւս ընկերներուն մօտ :

Երբ կոյսերը կ'ուրախանային և աղօթքներ կ'ընէին, վրայ հասան Տրդատի զրկած իշխաններն ու դահիճները :

Անոնց առջեւէն կուգային վառուած ջահեր բռնած մարդեր :

Անմիջապէս յարձակեցան, կապեցին Ս. Հռիփսիմէի ձեռքերը ետին և կ'ուղէին անոր լեզուն կտրել : Իսկ նա իր կամբովը բերանը բանալով լեզուն դուրս կը հանէր :

Այկէ ետքը անոր զգեստները հանեցին, մերկացուցին և գետինը չորս ցից տնկելով՝ ոտքերն ու ձեռքերը անոնց կապեցին ու պրկեցին :

Սոսկալի չարչարանքներ տուին : Անոր մարմինը այրեցին կրակով . անոր փորին վրայ մեծ մեծ քարեր դրին . աչքերը փորեցին և յետոյ անոր մարմինը կտոր կտոր ըրին :

Ս. Հռիփսիմէի հետ մէկտեղ սպաննեցին երեսուններկու հոգիներ : Յետոյ Ս. Գայիանէն ալ սպաննեցին սոսկալի չարչարանքներ տալէ ետքը :

Հարցաւան. — Ս. Գրեգոր քանի՞ տարի մնաց իւր վերապին մէջ. — Վերջին տարին ի՞նչ պատահեցաւ. — Կոյսերուն մեծը ո՞վ էր. — Ի՞նչպէս կ'ապրէին այդ կոյսերը. — Ամէնէն գեղեցիկը ո՞վ էր. — Տրդատ իմանալով Ս. Հռիփսիմէի գեղեցկութիւնը ի՞նչ հրամայեց. — Եկա՞ւ ան. — Ի՞նչպէս տարին քաղաք. — Տրդատ ի՞նչ ըրաւ. — Հռիփսիմէն հնազանդեցա՞ւ. — Գայիանէն ի՞նչ խթան տուաւ. — Հռիփսիմէն ի՞նչպէս սպաննեցին :

Ռարոյական քեյաղութիւն. — Ս. Հռիփսիմէն ու Ս. Գայիանէն այնպիսի տիպարներ են, որոնց դրուագները առատ նիւթ կը մատակարարեն բարոյական թելադրութեան համար. Խորհրդաճշտութեան նիւթ կարելի է դարձնել Ս. Հռիփսիմէի հաւատքը, փառասիրութենէ, պծնասիրութենէ զերթ կեանքը, արհամարհանքը դէպի ամէնէն աչքառու մեծութիւնը, անձնուիրութիւնը եւն . .

Խ. ԴԱՍ

ՏՐԴԱՏ ՔՐԻՍՏՈՆԵՅՅ ԿՂԼԼԱՅ

Տրդատ բարկանալով հրաման ըրած էր իր
Ս. Հռիփսիմէն և անոր ընկերները սպանեն, բայց
ետքը զղջաց, ցաւեցաւ .



Խոսրովիդուխ


Ս. Հռիփսիմէի պէս գեղեցիկ, բարի աղջիկ
մը մեռցնել տուած ըլլալուն համար իր սիրտը
շատ տխուր էր .

Ատոր համար Տրդատ սոսկալի հիւանդութեան

մը բռնուեցաւ, խելագարեցաւ և կենդանիներու
պէս դուրսերը կը պտտէր .

Շատ բժիշկներու դիմեցին, շատ դեղեր ու
դարմաններ ըրին, բայց չկրցան բժշկել .

Տրդատի քոյրը Խոսրովիդուխտ գիշեր մը ե-
րազ մը տեսաւ . Երազին մէջ լուսեղէն մարդ մը
գալով ըսաւ .



Էջմիածնի Տաճար

— Տրդատ թագաւորը և իր պալատական-
ները ուրիշ բանով չեն բժշկուիր եթէ ոչ Ս. Գրի-
գորի միջոցաւ . մարդ զրկեցէք Արտաշատ, բերել
տուէք Ս. Գրիգորը նա ամէնուդ ալ կը բժշկէ .

Երբ լսեցին Խոսրովիդուխտի երազը, ծիծա-
ղեցան ու ըսին .

— Դուն խենթեցեր ես, 14 տարի կ'ընէ խոր վիրապը ձգուած է ան, ի՞նչպէս կրնայ ողջ մնացած ըլլալ:

Խորովիդուխտ դարձեալ երազ տեսաւ, բայց չհամարձակեցաւ մարդու բան ըսել: Բայց երբ երրորդ անգամ տեսաւ, մարդ զրկեցին Արտաշատ, տեսանք որ Ս. Գրիգոր կենդանի է: Հանեցին, մաքրեցին և թագաւորին քով տարին:


Ս. Գրիգոր աղօթքով բժշկեց թագաւորը և անոր հետ մէկտեղ հիւանդացողները:

Քրիստոնէութիւնը քարոզեց անոնց: Բոլորն ալ մկրտեց: Տրդատ և Ս. Գրիգոր քանդեցին բոլոր մեհեանները և անոնց տեղ եկեղեցիներ ու վանքեր հիմնեցին:


Ս. Գրիգոր հիմնեց նաև Ս. Էջմիածնի տաճարը, ուր կը նստի Հայոց մեծ կաթողիկոսը:

Հարցումն. — Ս. Գրիգոր քանի՞ տարի մնաց խոր վիրապին մէջ. — Տրդատ ի՞նչ եղաւ. — Խորովիդուխտ ո՞վ էր և ի՞նչ տեսաւ. — Հաւատացին անոր. — Բանի՞ անգամ երազ տեսաւ. — Ի՞նչ ըրին. — Ս. Գրիգոր բժշկեց. — Մեհեանները ի՞նչ ըրին:

Բարոյական քննադատութիւն. — Ճշմարտութիւնը եւ բարին ուշ կամ կանուխ կը յաղթեն: Նեշտել թէ ինչո՞ւ Ս. Գրիգոր զնուարիչ կոչուած է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ




ՄԵՐ ԵՐԿՐԻՆ ԱՆՈՒՆԸ. — Մեր հայրերու բնակած երկիրը կը կոչուի ՀԱՅԱՍՏԱՆ, ուրիշ ազգեր կը կոչեն Արմէնիա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ. — Հայաստանի հիւսիսային կողմը կան Սեւ ծով, վրասսան եւ Ադրաւանիսսան, արեւելեան կողմը կը գտնուին Կասպից ծով, Մարասսան, Պարսկաստան, հարաւային կողմը կան Ասորեստան, Ասորիք և Միջերկրական ծով, իսկ արեւմտեան կողմը կը գրտնուի Կասպադովկիա և Փոքր Ասիա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԸ. — Հայաստան լեռնատ երկիր մըն է, ունի բարձր գագաթներ: Անոր ամէնէն բարձր գագաթն է Մասիս կամ Արարատ: Մեր հայրերը զայն կը կոչէին ազատ Մասիս: Այնչափ բարձր է, որ անոր վրայ տարին տասներկու ամիս ձիւնը անպակաս է: Նոյ նահապետին տապանը հանգչեցաւ անոր վրայ:

Հայաստանի մէկ ուրիշ բարձր գագաթն է Արագածը, ժողովուրդը զայն կը կոչէ Այագեազ, որ սիրուն, կանաչաւէտ լեռ մըն է: Մեր հայրերը

կ'ըսէին թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ այս լեռան
գագաթին վրայ, երկինքէն՝ ոսկի շղթայով կան-
թեղ մը կախեց և լոյս մը վառեց. հաղարաւոր




Արագած լեռ

տարիներէ ի վեր այդ լոյսը վառ էր և վառ պիտի
մնայ, որչափ ատեն որ Հայերը ըլլան իրենց հայ-
րենիքին մէջ.

Վանայ Ծովին հիւսիսային կողմը կայ Սիփասն
լեռը, որ կը կոչուի Սէգ, Գոռոզ լեռ, որովհետեւ
շատ բարձր է .

Վան քաղաքին մօտ կը գտնուի Վարագ լե-
ռը, ուր Ս. Հռիփսիմէի վիզէն կախուած էր Գը-
րխտոսի խաչափայտին մէկ կտորը . Այդ կտորը
լեռան վրայ թաղեցին. Հարիւրաւոր տարի ետքը,
որ մը, հովիւներ տեսան որ լոյս մը կը պլպլայ .



Սիփասն լեռ


լոյսին իջած տեղը փորեցին և խաչին կտորը գը-
տան . Այդ գիւտին տօնը Հայոց մէջ կը կոչուի
Վարագայ խաչ :

Հայաստան ունի նաև մեծ լեռնաշղթաներ,
որոնք են . Արարատեան շրթայ, Հայկական Տօ-
րոս և Սեւ ծովի շրթաներ : Արարատեան շրթան
կը գտնուի Հայաստանի կեդրոնը . Հայկական Տօ-
րոսը և Տօրոսը կը գտնուին հարաւային կողմը,
իսկ Սեւ Ծովի շրթաները կը գտնուին հիւսիսա-
յին կողմը : Կորդուաց լեռները՝ Հայկական Տօ-
րոսի մէկ մասն են :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻՃԵՐԸ. — Հայաստանի մէջ կան




Վանայ ծովը



Գեղամայ ծովը եւ Սեւան կղզին

բազմաթիւ մեծ ու պզտիկ լիճեր: Անոնց գլխա-
ւորներն են Վանայ լիճը կամ Վանայ Ծովը, որ
կոչուած է նաև Աղի կամ Բզնուռնեաց Ծով, Կու-



Եփրատ գետը

պուտան Ծովը և Գեղամայ Ծովը: Առաջին եր-
կուքը աղի ջուր ունին, բայց Գեղամայ Ծովը ա-
նուշ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ. — Հայաստանի լեռ-
ներէն և լիճերէն ջուրեր կը հոսին, որոնք նախ

աղբիւրներ և առուակներ են, հետզհետէ իրա-
րու միանալով և շատնալով կը ձեւացնեն ձորեր,
գետակներ և գետեր :

Հայաստանի գլխաւոր գետերն են. — Երասխ
և Կուր որ Կասպից ծով կը թափին, Աշխ, Իրիս
և Ճորոխ, որ Սեւ ծով կը թափին, Եփրատ և Տիգ-
րիս, որ Պարսից ծոց կը թափին, Սիհուն և Ճի-
հուն որ Միջերկրական ծով կը վազեն :

Երասխը մեր ժողովուրդին կողմէ կը կոչուի,
Մայր Արափսի, որուն վրայ երգ մըն ալ կայ :


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼԻՄԱՆ. — Հայաստան ունի բա-
րեխառն կլիմայ մը. ծովեզերքները օդը մեղմ է,
իսկ լեռներուն վրայ ցուրտ կ'ընէ. Հայաստանի
օդը շատ առողջարար է :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՅՍԵՐԸ. — Հայաստան ունի
ամէն տեսակ բոյսեր, պտղատու ծառեր կամ
տունկեր, ինչպէս՝ խաղող, խնձոր, սալոր, կեռաս,
սերկեւիլ, տանձ, դեղձ, ձմերուկ, սեխ, ևն.։ Ունի
նոյնպէս առատ արմտիք, ինչպէս՝ ցորեն, գարի,
վարսակ, կորեկ, եգիպտացորեն, եւն.։ Ունի դարձ-
եալ ընդեղէններ, ինչպէս՝ լուբիա, սիսեռն, ոլոռն,
ոսպ, եւն.։

Հայաստանի լեռներուն վրայ կը գտնուին աւի-
ստուններ, որոնցմէ ատաղձ, տախտակ կը հանեն :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ. — Հայաստանի
մէջ կան ամէն տեսակ կենդանիներ. նշանաւոր են
ոչխարը, այծը, ձին, կովը, հաւը, բադը, սագը :

Հայոց լիճերուն և գետերուն մէջ կան շատ տե-
սակ ձուկեր. ինչպէս ցարեխը՝ վանայ ծովին
մէջ, իշխանաձուկը՝ Գեղամայ ծովին մէջ. Հա-
յաստան ունի նաև վայրի կենդանիներ, առիւծ,
գայլ, աղուէս, բազէ և այլն :



Իշխանաձուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԵՐԸ. — Մեր երկրին մէջ
կան ամէն տեսակ հանքեր. ինչպէս՝ ոսկի, արծաթ,
հանքածուխ, քարիւղ, պղինձ, ծծումբ և այլն.։ Հա-
յաստանի մէջ կան նաև աղի հանքեր կամ աղու-
ձակներ, որոնք քարացած աղի լեռներ են :

Հայաստանի մէջ կան նաև հանքային ջուրեր
և տաք ջուրեր, երբ որ աղբիւրի մը ջուրը հողին
տակէն կ'անցնի և իր անցած տեղը՝ օրինակ՝ եր-
կաթի, ծծումբի հանքեր գտնուին, ջուրը իր մէջ
երկաթի, ծծումբի համ մը կ'առնէ. Այդպիսի հան-
քային ջուրեր շատ անգամ հիւանդութիւններու
դարման են :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒԹՅՆԵՐԸ. — Մեր հայ-
 բերուն երկիրը կը բաժնուի չորս մասի, որոնք են
 ա. — Մեծ Հայք
 բ. — Փոքր Հայք
 գ. — Միջագետք Հայոց
 դ. — Կիլիկիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔՆԵՐԸ. — Հայաստանի մէջ
 կան շատ մը քաղաքներ, Հին ատեն աւելի շատ
 մեծ քաղաքներ կային, բայց պատերազմներու և
 երկրաշարժներու պատճառով կործանած են, ա-
 ւերակ դարձած են. Հայաստանի գլխաւոր ու
 նշանաւոր քաղաքներն են. —

ՎԱՆ, որ կոչուած է նաև Շամիրամակերս,
 որովհետեւ շինուած է Ասորեստանի Շամիրամ թա-
 գուհիին կողմէ: Վանայ ծովին եզերքը շինուած է
 նաև Ախշաթ քաղաքը, դէպի արեւմուտք կը գը-
 նուի Մուշ քաղաքը՝ Սասունի հիւսիսային կողմը:
 Էջմիածին շինուած է Երասխ գետին մօտ:
 Հոն կը նստի Հայոց Կաթողիկոսը. Էջմիածնի մէջ
 շինուած են Ս. Հովնաթիսի, Ս. Գայիսանէիլտա-
 ճարները. Խոր Վիրապը կը գտնուի Էջմիածնի
 մօտերը, դէպի արեւելք:

ԵՐԵՒԱՆ կը գտնուի Երասխ գետին մէկ ճիւ-
 ղին վրայ, Էջմիածնի արեւելեան կողմը: Այսօր Ե-
 րեւան Հայկական Հանրապետութեան մայրա-
 քաղաքն է. Կարտագրէ ընտիր գինի, գօնեաք
 բամպակ, ցորեն, պտուղներ ևն.:

Արսալուս, Հայոց հին մայրաքաղաքներէն մէկն էր,
 շինուած էր Երասխի եզերքը, Երեւանի արեւելեան
 կողմը: Այսօր աւերակ է:

ԱՆԻ, նոյնպէս Հայոց հին մայրաքաղաքներէն մէկն
 էր, շինուած էր Երասխի մէկ ճիւղին վրայ. այժմ
 աւերակ է: Սկսած են անոր աւերակները փորել և
 հանուած են թանկագին հնութիւններ:

Արեւմտաարար, Անիի աւերակներուն հիւսիսային
 կողմը նշանաւոր քաղաք է: Հոն կան իտալական մեծ
 որբանոցներ:

Կարս, մեծ բերդաքաղաք մըն է Ալեքսանդրապոլի
 արեւմտեան կողմը:

Կարին կամ Էրզրում, Եփրատ գետին բլիւսած տե-
 ղերուն մօտ շինուած է և վաճառաշահ կեդրոն մըն է:

Եղեւիս, որ այժմ կը կոչուի Ուրֆա, Հայոց մայ-
 րաքաղաքներէն մէկն էր: Միջագետքի մէջ կը գը-
 նուի:

Կեսարիս կամ Մաժակ, Կապադովկիոյ մայրաքա-
 ղաքն էր և շինուած էր Արամ նահապետի Մշակ դօ-
 րապետին կողմէ:

Ասսուս, շինուած է Սիհուն գետին վրայ և Կիլի-
 կիոյ ամէնէն մեծ քաղաքն է այսօր:

Տիգրանակերս Հայոց հին մայրաքաղաքներէն մէկն
 էր, շինուած է Տիգրիս գետին քովերը:

Սիւս, նոյնպէս շինուած է Սիհուն գետին մօտերը
 և Կիլիկիոյ մայրաքաղաքն էր: Հոն կը նստի Սիւսի
 կաթողիկոսը:

ՀՍՅ ԳՍԴՈՒԹՆԵՐ.— Հայաստանէն դուրս կը
գտնուին բազմաթիւ Հայեր, որոնք տեղ տեղ խում-
բով կը բնակին: Այդ խումբերը կը կոչուին գաղութ-
ներ: Թուրքիոյ Հայերը գաղութ մըն են: Այդպիսի
գաղութներ կան Եւրոպայի, Ասիայի, Ափրիկիի և Ամե-
րիկայի մէջ:

(Վ Ե Ր Ջ)



2398

2013

